

16 տարուան բացակայութենէ ետք, երկ Պէյրոս վերադարձաւ նաքորական ղեկավար Զամալ Շաթիլա Օղակայանին մէջ հարցազրոյցին ընթացքին, Շաթիլա ըսաւ, որ իր վերադարձին մէջ մեն բաժին ունի այսօրուան կառավարութիւնը, մասնաւորաբար վարչապետ Սեյիմ Հըս:

Օղակայանին Շաթիլա ուղղուեցաւ դէպի Համրա, ուր դիմաւորուեցաւ ժողովրդային մեն բազմութեան մը կողմէ: Ան իր խօսքին մէջ կոչ ուղղեց համախոհական կառավարութեան մը կազմութեան, ինչպէս նաեւ լիբանանցի ժողովուրդին միասնականութեան:

# ԱԶՁԱՍԿ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE

1500 L.Ո. 73ԳԿ ՏԱՐԻ, ԹԻՒ 166 (20629) ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, 25 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2000 10 ԷՁ

**HORAIRE D'HIVER**  
à partir du 25 septembre 2000  
du lundi au vendredi  
de 8h15 à 16h00  
samedi  
de 8h15 à 12h30

البنك اللبناني الفرنسي  
**BANQUE LIBANO-FRANÇAISE**

## ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼԵԻ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅ

# ԻՍՐԱՅԷԼ ՀԱՄԱԶԱՅՆ՝ ՄԱՍՆԱԿԻ ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐԻ ՄԸ ԿՆՔՈՒՄՈՎ, ՄԻՆՂ ՊԱՂԵՍԻՆՅԻՔ ԿԸ ՄԵՐԺԵՆ ՆՄԱՆ ԱՌԱՋԱՐԿ


ԵՐՈՒՍԱԼՆԷՄ, 24 (ԴՈՅԹԸՐԶ) — Իսրայէլի վարչապետ ԷՏուտ Պարաք յայտնեց, որ թէ եւ իր թիրախն է պաղեստինցիներուն հետ ունենալ խաղաղութեան ամբողջական համաձայնագիր մը, բայց նա չի պահանջուիր ան կը բաւարարուի նաեւ մասնակի համաձայնագիրով մը:

Պարաք, որ կը խօսէր կառավարութեան նիստին, ըսաւ նաեւ, որ պաղեստինցիներն ու իսրայէլ իրենց բանակցութիւններուն մէջ մօտեցած են ճշմարտութեան պահուն:

Իսրայէլացի եւ պաղեստինցի պատուիրակները կիրակի օր վերադարձան հանդիպում մը ունեցան, վերջնական կարգաւորման կարգ մը հարցերուն լուծումներ ապահովելու փորձ մը կատարելու համար:

Պարաքի գրասենեակը հարցուցեց, որ վարչապետը կառավարութեան նիստին վերադարձնելու է, թէ կ'ուզէ բոլոր հարցերը լուծել եւ վերջնական համաձայնութիւն մը նուաճել պաղեստինցիներուն հետ, սակայն այս հանգրուանին կրնայ ընդունիլ համաձայնութիւն մը, որ կը լուծէ հարցերուն մեծ մասը եւ մնացեալին համար այնոր պայմանաժամ մը կը ճշդէ:

Պաղեստինցի գլխաւոր բանադնաց Սաէպ Աւրաբաթ սակայն դիտել տուաւ, որ մասնակի համաձայնագիր մը անընդունելի է պաղեստինցիներուն համար: Ուրաբաթ ըսաւ, որ Պարաքի հետ միասնաբար որոշում տրուած է, թէ համաձայնագիր պէտք է պարփակել վերջնական կարգաւորման շրջանը հարցերը: Ան աւելցուց, որ պայմանաժամը տրոյն իսկ աւարտած է (13 Սեպտեմբեր)



Մարքիս Ինտիք

Եւ հիմա կը գտնուինք երկարաձգուած ժամանակին մէջ: Ուրաբաթ յայտնեց, որ իսրայէլ պիտի յարգէ խաղաղութիւն հաստատելու խոստումը:

Արտաքին գործոց նախարարի պաշտօնակատար Շլոմօ Պէն Ամի իր կարգին ըսաւ, որ իսրայէլ պատրաստ է յետաձգելու Երուսաղէմի բանակցութիւնները եւ մասնակի համաձայնագիր մը ստորագրելու պաղեստինցիներուն հետ: Իսրայէլի եւ պաղեստինցիներուն միջեւ համաձայնագիր մը արդէ իսկ ոչ չի ստացուիր Երուսաղէմէն է, որուն գծով ցարկ կարելի չէ եղած համաձայնութիւն գոյացնել: Պաղեստինցիները կ'ըսեն, որ Երուսաղէմի հարցը մէկ կ'ընկնէ կը նշանակէ, թէ իսրայէլ պիտի չարտոնակէ գրաւուած պահել Արեւելեան Երուսաղէմը:

Պէն Ամի ըսաւ նաեւ, որ Ուաշինկթըն կրնայ

հրաժարիլ խաղաղարար միջնորդութենէն, եթէ իր կողմէ վերջերս պատրաստուած առաջարկներու ծրագիր մը չչափողի լուծել տարակարծութիւնները: Յառաջիկայ քանի մը շաբաթները պիտի ներկայացնեն խաղաղութեան վերջին առիթը, աւելցուց Պէն Ամի: Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Մատթէյն Օլայրաթ եւս ըսած էր, որ ամերիկեան նախաձեռնութիւնը խաղաղարար վերջին փորձն է:

● Պէն Ամի Երկուշաբթի օր (այսօր) Գահիրէ կ'այցելէ Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացին գծով հանդիպում մը ունենալու համար Եգիպտոսի նախագահ Հիւսէյն Մուպարաբի հետ: Պէն Ամի տեսակցութիւն պիտի ունենայ նաեւ արտաքին գործոց նախարար Ամր Մուսալի հետ:

● ՄԻԱՅՆԱԿԱԿԱՆ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ արտաքին գործոց նախարարութիւնը առկա իսրայէլի մէջ ղեկավար Մարթի Ինտիքի կարգ մը իրաւաստութիւնները: Ինտիք Ուաշինկթըն պիտի մնայ մինչեւ սկսած հետաքննութիւնը աւարտի: Նախարարութիւնը կ'ստանձնէ ունի, որ ապահովական գեներալ Վալաք մը խախտումներ արձանագրուած են: Ինտիքի բացակայութեան, դեսպանատան գործընթացի պիտի վարչ գործաւորը՝ Փոլ Սայմընը: Մինչեւ քննութիւններուն աւարտը Ինտիք իրաւունք պիտի չունենայ նաեւ առանց հսկիչի շրջելու արտաքին գործոց նախարարութեան մէջ: Անոր պիտի չյանձնուին նաեւ խիստ պաղտնի նկատուած թղթածրարներ:

### ԵՐԿՈՒՇԱՐԹԻ

## ՆԱԽԱԳԱՎԱԿԱՆ ԵՒ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՅԱՅԱՆ ՀԱՆԴԱՐՏ ՄԹՆՈՒՈՐՏԻ ՄԷՉ



Միլոշեւիչ կը մասնակցի ընտրութեան

Երկուսուսուրդ մէջ երէկ տեղի ունեցան նախագահական եւ երեսփոխանական ընտրութիւնները, որոնք նախագահ Սլոբոդան Միլոշեւիչի 13 տարուան իշխանութեան մեծագոյն մարտահրաշքերը կը ներկայացնեն:

Քուէարկութեան մասնակցութեան համեմատութիւնը կը տարբերք մէկ չըլնէր միւսը: Քուտուրի ալիքնայիններուն մեծամասնութիւնը կարեւորութիւն շուտաւ ընտրութիւններուն հետ մնացող քուէարկութեան կեդրոններն էին: Իսկ Մոնթենեգրոյ մէջ Միլոշեւիչի հետեւորդներն են միայն, որ մասնակցեցան քուէարկութեան, յայտնեցին ակամատները:

Քուէարկութեան մասնակցելէ ետք, Միլոշեւիչ լաւատեսութեամբ խօսեցաւ քուէարկութեան մասին: Ան ըսաւ, որ ընտրութիւններու յաջողութիւնը նախատեսելի էր Սերբիոյ քաղաքական հրապարակը մարտի ստեղծելով մնացուն կայունութեան եւ մասնակցեցան աւելի արագ բարգաւաճման նպատակով պայմաններ: Միլոշեւիչ կանխաձեռն ընտրու-

թեան ենթարկել ընդհիմադիր ճակատի ներկայացուցչը՝ Ոլիւլա Բոսթոնիչան, որ ըստ հարցախոյզներուն վեցէն քսան կէտի առաւելութիւն ունի: Բոսթոնիչա, մասնակցելէ ետք քուէարկութեան, ըսաւ, որ Երկուսուսուրդ կարիքը ունի փոփոխութեան եւ ընտրութիւնները պէտք է ցուց տան, թէ ժողովրդավարութեամբ ղեկավարուող երկիրը մը մէջ իշխանութիւնը փոփոխական է: Բոսթոնիչա քննադատեց կառավարութիւնը, զի թեւ չարագործիք մը ընթացքին շրջապատը մտնելով քուէարկողները:

Միւս կողմէ, վարչապետ Մոմիր Պուլաթովիչ զիտել տուաւ, որ Միլոշեւիչ պարտաւոր է իշխանութեան վրայ մնալու մինչեւ Յունիս 2001, որովհետեւ սահմանադրութիւնը այդպէս կը պահանջէ: Վարչապետը Ծար.՝ էջ 10

### ՆԱԽԱԳԱՎԱԿԱՆ ՆՍԱՋԵՐՁԱՆԸ ԿՐԱՏԵՆՈՒ ԳԾՈՎ

## ՖՐԱՆՍԱՅԻ ՀԱՆՐԱՔՈՒԹԻՆ ՅԱՏԿԱՆՇՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱԿՈՒԹԵԱՆ ՇԱՏ ՑԱԾ ՀԱՍԵՄԱՏՈՒԹԵԱՄԲ, ԱՅՍՈՒՀԱՆԴԵՐԶ «ԱՅՈՆ» ԵՂԱՒ ՏԻՐԱՊԵՏՈՂ

Ֆրանսայի մէջ երէկ տեղի ունեցած հանրաքուէ մը, որ կ'առնչուի նախագահական նստաշրջանը եօթէն հինգի կրճատելու առաջարկին:

Քուէարկելու իրաւունք ունեցող աւելի քան քսան տարեկան միլիոն ֆրանսացիներուն մեծ մասը սակայն հետաքրքրութիւն ցոյց չտուաւ եւ հետո մնաց քուէարկութեան կեդրոններէն: Դէտեր կ'ըսեն, որ ֆրանսայի պատմութեան մէջ մասնակցութեան ամէնէն ցած համեմատութիւնը ունեցած է երէկուան հանրաքուէն: Շարաթ օր հրապարակուած հարցախոյզի մը արդիւնքը նախատեսած էր, որ ֆրանսացիներուն 72 տոկ հարիւրը կը նախընտրէ շմասնակցի հանրաքուէին: Ֆրանսացիներուն այս կեցուածքը ներքին կը մատնէ նախագահ Ժաք Շիրաքն ու վարչապետ Լիոնէլ Ժոսփէնը, որոնք գորաւիզ կը կանգնեն նախագահական նստաշրջանը Ծար.՝ էջ 10

## ՀԱՅԱՍՏԱՆ ՈՉ ՄԻԱՅՆ ՌՈՒՍԻՈՅ ՌԱՄՁԱՎԱՐԱԿԱՆ ԴԱՇՆԱԿԻՅՆ Է, ԱՅԼԵԻ ԱՆՈՐ ՎՍՏԱՀԵԼԻ ԸՆԿԵՐԸ ԵՒ ԳՈՐԾԱԿԻՅԸ

### ԿԸՍԵ ՊԵՐՏԵՆԻՔՈՎ

Ռուսիոյ արտաքին գործոց փոխ նախարար Կրեմլի Պերտենիքով յայտնեց, որ «Հայաստան ոչ միայն Ռուսիոյ ռազմավարական դաշնակիցն է, այլեւ անոր վստահելի ընկերը եւ գործակիցը»:

Հայաստանի նախագահ Ռուպիթ Բոչարեանի Մոսկուա այցելութեան նախօրեակին «Հայաստանի Հանրապետութիւն» թերթին հետ հարցազրոյցի մը ընթացքին Պերտենիքով նշեց, որ «մեր յարաբերութիւնները քաղաքական են Կոմկոմի երկիրներու միջեւ լարի զրացնութեան երկարատեւ յարաբերութիւններու համակարգի մը հաստատման ուղղութեամբ: Այս իմաստով ռուս ղեկավարները եւ Ռուսիա կարեւոր կը նկատեն այսպէս կոչուած կողմնակառի չըլնանակներուն մէջ գործակցութեան ամրապնդումը»:

Պերտենիքով ըսաւ, որ Հայաստանի եւ Ռուսիոյ միջեւ երկուսուսուրդի պայմաններն են նաեւ իրար կարեւոր զարգացումները: Ան յայտնեց, որ այս գրութիւնը պիտի հաստատուի երկկողմանի համաձայնութեան հիմամբ:

Ռուս ղեկավարները ըսաւ, որ Հայաստանի եւ Ազրբայճանի միջեւ յարաբերութիւններու զարգացումը շատ կարեւոր է Ռուսիոյ համար: Ան անհրաժեշտ նկատեց կողմնակառի երկիրներու միջեւ բազմակողմանի եւ երկկողմանի յարաբերու-

## ՀԱՅԱԿԱՆ ՑԵՂԱՊԱՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԲԱՆԱԶԵԻ

### Կ. ՊՈԼՍՈՅ ՄԵՍՐՈՊ Բ. ՊԱՏՐԻԱՐԵՆՆ ԶԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Ստորեւ տրուած յուր եւ յայտարարութիւնը կարիք չունին մեկնարկուիլու: Անոնք կը ցոյցանեն Թուրքիոյ հայերուն ճնշումը վիճակը եւ անոնց սպառնացող վտանգը:

Հինգշաբթի երեկոյնի սկսեալ, Թուրքիոյ մասնուր կ'ողողուի Հայկական Յեղափոխութեան քանաձեռն մասին յուրերով եւ մեկնարկուիլուներով: Կ. Պոլսոյ Տ. Մեսրոպ Բ. պատրիարք հայրը, որ Լիպսոնի Լատին պատրիարքութեան հրաւերով շարաքաղերջին միջկրօնական համագումարի մը մասնակցելու համար արտասահման պիտի գտնուէր, իսկոյն փոխեց իր ծրագիրը եւ մնաց Պոլսոյ մէջ: Արդարեւ, Հինգշաբթի գիշերուրն սկսեալ թուրք թերթերու եւ պատկերասփիւռներու թղթակիցները սկսան հայոց պատրիարքարանը դիմել՝ ունենալու համար հայոց պատրիարքի եւ հայ համայնքի կարծիքները: Ամերիկայի Ներկայացուցիչներու Տան Միչըպպային Գործող մասնակցներու եւ Մարդկային Իրաւանց ենթայանձնախումբի կողմէ «Հայկական Յեղափոխութեան» քանաձեռն ընդունման կապակցութեամբ ի՞նչ կ'ըսէր Թուրքիոյ հայ համայնքը: Ի՞նչ կարծիք ունէր Թուրքիոյ հայոց պատրիարքը:

Այսպէս, ամենապատուի սուրբ պատրիարք հայր երէկ համայնքի աշխարհական վարիչներուն հետ խորհրդակցելէ ետք, հրապարակեց մամլոյ հետեւեալ հաղորդագրութիւնը:

«Թուրքերու եւ հայերու փոխ յարաբերութիւնները առնչող հարցերու մասին հաճելի չէ, որ կողմ չեղող խորհրդարաններ որոշումներ որդեգրեն: Մենք եւս կը կարծեմք, թէ նման միջամտութիւններ անխուսափելի են եւ ցաւալի սոյն վիճակը կը շարունակուի որքան ատեն որ կողմերը այս հարցին լուծում չեն որոնէր երկխօսութեան ճանապարհով: «Երբորդ երկիրներու խորհրդարաններու գործածումը կարելի չէ, որ երկխօսութեան տեղը բռնէ: Ամէն պարագայի այս հարցը այլեւս պէտք է պատի կանաչան խմբաւորումներու կողմէ այլապէս պատճառներով շահագործման ենթակայ մնայ: Չեմ կարծեմ, որ իրերու այսօրուան վիճակը շահ կ'ապահովէ ռեւէ մէկուն, քննախաւաքը կը խորհիմ, որ վնաս կը պատճառէ հայերուրք յարաբերութիւններուն»:

«Ռեւէ նախաձեռնութիւն, որ երկխօսութեան, խաղաղութեան եւ բարեկամութեան հաւանականութիւնները կը կասեցնէ» վնասակար է: Հայիւթուրք ժողովուրդներուն համար աղօթելի պատ, իմ ձեռքս ոչ մէկ բան կու գայ: Պիտիւրնման եւ կարգաւորման ուղիներուն փակուիլը յուշիչ երեւոյթ է:

«Կ'ուզեմք հաւատալ, որ Թուրքիոյ ժողովուրդն ու հայրային կարծիքը ուղիղ կը վերլուծեն վերջին պարագայները եւ չեն արտօնէր, որ այս վերջին դէպքը վնաս պատճառէ Թուրքիոյ հայազգի հայրենակիցներուն»:

## ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՏԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԵՒ ՄԱՍԻՆ ԻՐԱԿԱՆՑ ԵՆԹԱՅՆՁՆԱԽՈՒՄԻՆ ԿՈՂՄԷ ՀԱՅԱԿԱՆ ԑՆԿԱՊԱՊԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԶԵԻՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ԸՆԿՎՋՈՒՄ ՅԱՆԱԶԱՅՆԵԼ ԹՈՒՐԿԵՐՈՒՆ ՄՕՏ

Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութիւնը Ուրբաթ օր քննադատեց Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տան ենթա-յան զարգացումները: Այս իմաստով ռուս ղեկավարները եւ Ռուսիա կարեւոր կը նկատեն այսպէս կոչուած կողմնակառի չըլնանակներուն մէջ գործակցութեան ամրապնդումը»:

Պերտենիքով ըսաւ, որ Հայաստանի եւ Ազրբայճանի միջեւ յարաբերութիւններու զարգացումը շատ կարեւոր է Ռուսիոյ համար: Ան անհրաժեշտ նկատեց կողմնակառի երկիրներու միջեւ բազմակողմանի եւ երկկողմանի յարաբերու-

### ԵՐԵՍՓՈՒԽԱՆ ՊԱՅՏՈՒՆ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԳՐԱԻԸ ԿԸ ԴՆԸ ԶՕՐԱԻՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՄԸ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Երեսփոխան Մոհամեդ Ապտեյ Համաթ Պալաուն ընդգրկեց, որ միայն զօրաւոր կառավարութեան մը կազմութիւնը կրնայ արժանանալ ժողովուրդին վստահութեան եւ Լիբանանին ինչպէս անընդհատ քաջաբնութեամբ, որոնք կը ծառայեն միայն վիճակի վատթարացումին:

### ՔՐԸՏԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿԸ ՆԿԱՏԷ ԼԻԲԱՆԱՆԵՒՍՈՒՐԻԱԿԱՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Նորընտիր Երեսփոխան Նասիբ Քրնտիլ նկատել տուաւ, որ արար - իրար լէ՛շեան հակամարտութիւնը կը շարունակուի եւ իսրայէլի հետ ճակատամար կը մնայ հաւանական, հետեւաբար անհրաժեշտ է ամրապնդել իրանաեւստրիական գործակցութիւնը, ձախողութեան մտտերու համար իսրայէլեան դաւերը, յատկապէս պաղեստինցիներու ընկերակցումը:

Բանաեւստրիական միասնութիւնը, կը ըսէ Քրնտիլ:

### ՔԱՆԻ ՍԸ ՏՈՂՈՎ

●ԱՒԵԼԻ քան երկու հարկեր երկէ կաշառու մը կատարեցին պահանջելով «կիներու իրաւունքները եւ սեռային խտրականութեան ու վարչապետութեան սանձուկը»: Անոնք իրանաեւստրիական գործակցութեան ու պաղեստինցիներու ընկերակցումը մէկ ուն վրայ գրուած էր: «Մեր իրաւունքները պիտի չպատկուի իսրայէլի քաղաքական ու հումանիթար ինքնաշարժութեան մասունքը»:

Նալիմ Քասէմ զգուշացուց, որ իսրայէլ կ'աշխատի ներքին պատերազմի միջոցով իրանացիները: Ազատագրութեան մը ֆրոնտայի ղեկավար ընկերակցութեան հետ հանդիպումի մը ընթացքին, շէյխ Քասէմ զրոհեցուց, որ Հըզպալլայի պետութիւնը չի փոխարինուի եւ անոր հետ կատարեալ հասկացողութիւն կայ:

●ԵՐԵՍՓՈՒԽԱՆ Այլի իրէյս ըսաւ, որ Իսրայէլ պարտութեան մասունքով է շնորհիւ նահատակներու գոհացումներուն, ազգային միասնականութեան եւ Սուրիոյ գործակցութեան: «Այժմ անհրաժեշտ է պահպանել այս յայտնակը, պահպանելով մեր միասնականութիւնը», ըսաւ իրէյս, կոչ ուղղելով կազմելու ազգային համախոհութեան կառավարութիւն մը, որ կրնայ երկիրը փրկել անտեսական դժուարութիւններէն, պահպանել սահմանադրական կառուցչները եւ հայրենիքը կառուցել ճիշդ հիմքերու վրայ:

### ՊԱՏՐԻԱՐՔ ՍՖԵՅՐ ԿԸ ԼՈՒՍԱԲԱՆԷ

Մարտինեան Մար Նասրալլա Պուժրոս Մֆէյլը պատրիարք երկկարտասանած իր քարոզչի մէջ նկատել տուաւ, որ մարտին եպիսկոպոսներու կոչը հետո է անոր արուած ոմանց մեկնարանութիւններէն, եւ թաղութիւններէն ու եզրակացութիւններէն: Հոն ըսուածը կարգ մը քաղաքացիներու տեսակէտներն ու տառապանքի պատճառներն են, ըսաւ ան, նկատել տալով, որ այլ քաղաքացիներ յայտնի պատճառներով չեն ուղեր անսել իրավիճակը:

Մատարոզէն ետք Պերքէի մէջ Մֆէյլը հանդիպում ունեցաւ Սուրիոյ մէջ արգելափակուածներու հարազատներու հետ: Անոնք կոչ ուղղեցին նախագահ զօրէի Լահուտի եւ բանակի հրամանատար զօր. Միշէլ Սէյմանի աշխատելու իրենց հարազատներուն ազատարձակումին համար:

Մֆէյլը անոնց վստահեցուց, որ իրաւունք չի կորսուելու այնքան ատեն, որ զայն պահանջող կայ, եւ հաստատեց, որ անոնց հարցը ազգային հարց է: Ան ընդգծեց, որ կը պահանջէ թէ՛ իսրայէլեան, թէ՛ սուրիական բանտերուն մէջ արգելափակուածներուն արձակումը:

### ՇԷՅԽ ՔԱՊԱԼԱՆ ԿՈՉ Կ՝ՈՒՂՂԷ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐՈՒ ՓՈԹՈՐԻԿԸ ՇՐՋԱՆՅԵԼՈՒ

Շիինեան գերագոյն խորհուրդի փոխ նախագահ շէյխ Ապտէլ Ամիր Քապալան, երէկ Քֆարաի մէջ, Ամալի նահատակ հրամանատարներ Տաուու Տաուուի, Մահմուտ Ճաբրին եւ Հասան Սպայթիի լիչատակին նուիրուած հանդիպումին մը ընթացքին արտասանեց խօսք մը, որուն մէջ ընդգրկեց, թէ Ամալի հերոսները նահատակուած են արդիւնէն համար երկիրն իր ժամանակը եւ պաղեստինցիներուն ընկերակցումը, ինչպէս նաեւ զիմազրաւելու բուն պաղեստինցիներուն դէմ եւ Լիբանան իր նպատակին հասած է:

Մենաշնորհներու ժամանակաշրջանը անցած է եւ համակցութեան ու բողոքի հետ գործակցութեամբ Լիբանանը փրկելու ժամանակաշրջանն է», ըսաւ ան, զգուշացնելով, որ երկիրը իսրայէլի անջնեւ է եւ անհրաժեշտ է զգաստ եւ զգուշ մնալ:

Պէտք է շրջանցել վերջին օրերու փոթորիկը, ամէն մարդ կը սխալի, բայց իրանացիներուն միջեւ սեպ խրոյղ ձայները պէտք է լռեն, ըսաւ ան, աւելցնելով, որ հանրապետութեան նախագահը արիւրար խօսած է եւ յստակ դարձուցած՝ որ պէտք չէ սպերախառ լլլալ զիմազրուութեան նեցուկ կանգնած, Լիբանանը փրկած է հարաւորագրուած միջոցով օժանդակած Սուրիոյ նկատմամբ:

Շէյխ Քապալան կոչ ուղղեց վերջ գնելու բանաձեւերուն եւ շէյտեց, որ սուրիական ներկայութիւնն ու զիբը կը ճշդ է Լիբանանի պետութիւնը:

### ԺՈՄՊԼԱԹ ԱՆԴԱՐՉ ԿՈՐԱԾ ԿԸ ՆԿԱՏԷ ՊԱՏԵՐԱԾՄԻ ՈՃԸ

Երեսփոխան Ռալիտ Ժոմայլաթ երէկ ժողովրդային պատուիրակութիւններ ընդունած պահուն ընդգծեց, որ սիւն երկխօսութեան ոճը օգտակար է, որովհետեւ պատերազմի ոճը անդարձ կորած է:

Այժմ անհրաժեշտ է ամրապնդել ազգային միասնութիւնը, ժողովրդավարութիւնը եւ ազատութիւնները, ըսաւ Ժոմայլաթ յոյս յայտնելով, որ յաջորդ կատարվող լիբանանցի կարողութիւնը կ'ունենայ դիմագրաւելու երկրին ուղղուած մարտահրաւերները՝ յատկապէս տնտեսական եւ ընկերային բնագաւառներէն: Ժոմայլաթ ըսաւ, որ Լիբանան պէտք է սնայ գերիշխան արաբական եւ ժողովրդավար երկիր մը, որ ունի Սուրիոյ հետ որոշ յարաբերութիւններ, որոնք կը սնան փոխադարձ յարգանքի եւ հասարակաց շահերու վրայ:

### ԱԶԳԱՅԻՆ ԱՔՍՈՐ ՊԱՍՏԻՆԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ ԸՆՈ. (01) 261115

**ՄԱՆԿԱՄԱՌՈՒՐ**

1 տարեկանէն սկսեալ  
Առաւօտեան ժամը 7:30էն 2:30  
Մանկավարժական խաղեր  
Առաւելագոյն չափով խնամք  
Բարեգարդուած դասարան եւ  
խաղավայր  
Ամսական եւ տարեկան դրուծին  
Ապահովագրուած

Արձանագրութեանց եւ յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել  
01/261115 թիւին կամ անձամբ ներկայանալ դպրոցի քարտուղարութեան:

### ԱԶԳԱՅԻՆ ԱԲԳԱՐԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ

ՀԵՌ. 261622, 03 / 268640  
2000 - 2001 ՏԱՐԵՐԻ ԶԱՆ

- 1.- Հին թէ նոր աշակերտներուն արձանագրութիւնը կը շարունակուի ամէն օր (բացի Ծաբաթ օրերէն), կէսօրէ առաջ ժամը 9:00էն 12:00:
- 2.- Նորեկ աշակերտները պէտք է ներկայացնեն իրար ընդ քայտի լուսապատճէն, պատուատներու թուղթ, վիճակագոյց, փոխանցագիր եւ 2 լուսանկար:
- 3.- Մանկավարժային կ'ընդունուին 1,5 տարեկանէն վեր մանուկներ:
- 4.- Վերաքննութիւնները տեղի կ'ունենան կէսօրէ առաջ ժամը 9:00էն սկսեալ՝ հետեւեալ դասարանումով:
- 25 Սեպտեմբեր 2000ին՝ լեզուական դասաւնիթեր,
- 26 Սեպտեմբեր 2000ին՝ թուաբանութիւն եւ գիտական նիւթեր,
- 27 Սեպտեմբեր 2000ին՝ պատմական նիւթեր:
- 5.- Դասագիրքերու ցանկերը եւ համապատասխան կարելի է ստանալ 18 Սեպտեմբերին սկսեալ, ներկայանալով քարտուղարութեան:
- 6.- Դասաւարտութեան պիտի սկսինք 4 Հոկտեմբեր 2000ին:
- 7.- Օթորքային սպասարկութիւնը ապահովուած է բոլոր շրջաններու համար:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

### ԱԶԳԱՅԻՆ ԼԵՒՈՆ ԵՒ ՍՈՖԻԱ ՅԱՎՈՐԵԱՆ ՔՈԼԵԸ

ՊՈՒՐԸ ՀԱՄՈՒՏ, ՀԵՌ. 262618

ԱՆՈՐԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ  
2000 - 2001 կրթական տարեշրջանի արձանագրութիւնները կը շարունակուին ամէն օր, ժամը 8:30 - 12:30, բացի Ծաբաթ օրերէն:

Նորեկ աշակերտները կը խնդրուի իրենց հետ բերել անձնաթուղթի լուսապատճէն, նախկին վարժարանի փոխանցագիր, վիճակագոյց եւ երկու լուսանկար:

Բ. ԻՐԱՆԱԿԱՆ ԲԱԺԻՆ  
Ուրախ ենք յայտարարելու, որ ընդէս անգլերենի կողքին պիտի ունենայ նաեւ ֆրանսական բաժին միջնակարգ դասարաններու (7րդ, 8րդ եւ 9րդ):

Գ. ՎԵՐԱՄՈՒՏ  
Պրօֆէ եւ պարաօրտ դասարանները կանոնաւոր դասաւանդութեան պիտի սկսին Գործընթացի, 20 Սեպտեմբերին, իսկ մնացեալ դասարանները՝ Գործընթացի, 4 Հոկտեմբերին:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

**ՆԵՐՍԷ  
ԼԻՊԱՐԵԱՆ**

ընդ  
**ՆԱՆՈՐ  
ՄՆԱՊԵԱՆ**

Ամուսնացեալք  
24 Սեպտեմբեր  
2000, Պէյրուք

**ԱՐԱՔՍ ԱՐԱ  
ՊԱԼԵԱՆ**

Ընդ  
**ՏՈՋԸ. ԱՐՄԱՆ  
ԱՐԱ  
ԳՐԻԳՈՐԵԱՆ**

Նշանուած  
23 Սեպտեմբեր 2000,  
Պէյրուք

**Կ՝ՈՒՂՈՒԻ**

●Ծախող օրիորդ մը,  
18էն 25 տարեկան,  
MANO PLUS  
հաստատութեան համար, ABC կեդրոն, Տրպպայա: Երթելէը ապահովուած: Հեռ. 03 - 388708:

**STUDIO  
Lantern**

●Կը ստանձնէ  
ուրախ  
անիթերու  
video  
նկարահանումներ  
Հեռ. 01-266866  
եւ 03-695399

**ՎԱՆԱՅ ԶԱՅՆ**      **ՎԱՆԱՅ ԶԱՅՆ**

Այսօր Երկուշաբթի, 25 Սեպտեմբեր, ժամը 12:30ի լուրերն ենք ՈՒՆԿԱԴՐԵՅԷ ԸՐԹԱԶՐՈՅՑ ՍԸ

Ուսումնական խորհուրդի ատենապետ՝  
**ՏԻԳՐԱՆ ԳԻՆՊԱՇԵԱՆԻ** հետ  
Նիւթ՝ «ՎԵՐԱՄՈՒՏԷ ԵՒ ՀԱՅ ԴՊՐՈՅԸ»

### ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԲԱՐՉՐԱԳՈՅՆ ՎԱՐՃԱՐԱՆ

Աստուծոյ ապաւինելով, 2000-2001 տարեշրջանի նախկին եւ նոր աշակերտներու արձանագրութիւնները կը շարունակուին ամէն օր առաւօտեան ժամը 8:30էն 12:00, բացի Ծաբաթ եւ Կիրակի օրերէն:

Ուրախ ենք յայտարարելու, թէ յառաջիկայ տարեշրջանի երկրորդական Բ. կարգը պիտի ունենայ HUMANITIES բաժինը, գիտականի կողքին:

Նորեկ աշակերտները կը պահանջուի՝  
ա.- Վերջին 2 տարուան վիճակագոյց:  
բ.- Ինքնութեան թուղթի լուսապատճէն:  
գ.- Երկու նոր լուսանկար:  
դ.- Բարի վարուց վկայագիր:  
ե.- Նախկին վարժարանէն աշակերտին պետական թիւ՝ վաւերացուած:

●ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ տեղի պիտի ունենան առաւօտեան ժամը 10:00ին:

Հինգշաբթի, 14 Սեպտեմբեր 2000՝ լեզուական նիւթեր:

Ուրբաթ, 15 Սեպտեմբեր 2000՝ թուաբանութիւն եւ գիտական նիւթեր:

●ՎԵՐԱՄՈՒՏ  
ա.- BREVET - BACC II՝ Երկուշաբթի, 18 Սեպտեմբեր 2000:

բ.- Երկրորդական, միջնակարգ եւ նախակարգարձան՝ Երկուշաբթի, 2 Հոկտեմբեր 2000:

գ.- ՄԱՆԿԱՊԱՐՏԷՁ՝ Գործընթացի, 4 Հոկտեմբեր 2000:

Նաեւ նկատի ունենալ հետեւեալները.-

1.- Ընդունման տարիք՝ 2 տարեկան 7 ամսու:

2.- Խաղալիքներով օժտուած բացօթեայ խաղավայր:

3.- Ուսուցման արդիական միջոցներ: Համակարգիչի դասընթաց:

4.- Յատուկ սակ Ծիլ դասարանի աշակերտներուն:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

**ՄԵՐ ԸՏԵ ԿԸ ՍԿՍԻ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆԸ**

TS, BT. մասնագիտական արհեստագիտութիւն TDՏ ուսուցման լեզու, ֆրանսերէն եւ անգլերէն դասընթացներ կէսօրէ առաջ եւ կէսօրէ ետք:

- Ուսուցիչի եւ հեռատեսիլի մասնագետ
- Համակարգիչներու մասնագետ
- Եր-քոնսիսիոններու մասնագետ
- Մեքանիքի եւ ինքնաշարժներու ելեկտրականութիւն
- Ինքնաշարժներու ելեկտրոնիքի մասնագետ

**ՊԻՊԼՈՍ ՀԻՄՆԱՐԿ**

**BYBLOS INSTITUTE**

Dora: 01 874600-1      Տրապ. 01-874600  
Haret Hreik: 01 273863-4      Հաբէթ Հաբէթ. 01-273863/4  
Furn el Chebbak: 01 293175-6      Ֆըրն Երպպէ. 01-293175/6

**ՊԻՊԼՈՍ ՀԻՄՆԱՐԿ**

**BYBLOS INSTITUTE**

Dora: 01 874600-1      Տրապ. 01-874600  
Haret Hreik: 01 273863-4      Հաբէթ Հաբէթ. 01-273863/4  
Furn el Chebbak: 01 293175-6      Ֆըրն Երպպէ. 01-293175/6

### ԿԻՊՐՈՍԻ ԸԱՐՑ

Թուրք - կիպրացի դեկավար Ռաուֆ Տենքթաշ ըսաւ, որ կիպրոսը վերամիացնելու բանակցութիւնները եպրակացութեան մը պիտի չյանգին եւ պիտի չաւարտին. Եթէ հիւսիսային կիպրոսի մէջ հաստատուած իշխանութիւնը ճանաչուի չտանայ յոյն-կիպրացիներէն: Տենքթաշ շեշտեց, որ հիւսիսային կիպրոսը իրեն պետութիւն ճանչնալու իր պահանջը բանակցելի նիւթ չէ:

Տենքթաշ աւելցուց, որ յոյն-կիպրացիները պետք է պիշին եւ ընդունին, որ իրենց կառավարութիւնը չի ներկայացներ թուրք - կիպրացիները: Եթէ այս պահանջը չիրականանայ, բանակցութիւնները պիտի երկարին եւ իրենց աւարտին պիտի չհասնին:

Թուրք - կիպրացի դեկավարը կը խօսէր ՄԱԿի յատուկ պատուիրակ Ալվարո Ինչոյի հետ ունեցած տեսակցութեան մը աւարտին. ՄԱԿի կեդրոնատեղիին մէջ: ՄԱԿի հովանաւորած բանակցութիւններուն նորագոյն նիւտը սկսած էր Սեպտեմբերին: ՄԱԿի իսրայէլաւար նախաձեռնութեան նպատակն է վերամիացնել 1974ին ի վեր բաժնուած կղզին: ՄԱԿի փորձերը ցարդ նուաճում չեն արձանագրած: Տենքթաշ եւ կիպրոսի նախագահ Կլաֆքոս Քլեթիտոս ուղղակի բանակցութիւններ չեն ունեցած: Անոնք անջատաբար հանդիպումներ կ'ունենան ՄԱԿի պատուիրակներուն հետ: Տենքթաշ կ'առաջարկէ երկու պետութիւններ ունենալ կիպրոսի մէջ, մինչ Քլեթիտոս անընդունելի կը նկատէ այս առաջարկը:

(ՌՈՅԹԸՐԸ)

## ՍՈՒՐԻԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ ԻՐԱՔԻ ՄԷՉ

Սուրիական պատուիրակութիւնը մը շարափակներին իրաք մեկնեցաւ, բանակցելու համար անտեսական երկկողմանի կապերուն թափ մասին, հաղորդեց ԻՆԱ կրատու գործակալութիւնը:

ԻՆԱ յայտնեց, որ Սուրիոյ ճարտարարուեստի նախարար Ահմէտ Համօ կ'առաջնորդէ քսան պաշտօնատարներէ եւ տնտեսագէտներէ կազմուած պատուիրակութիւն մը, որ իրաք կ'այցելէ քննարկելու համար պայմանագրութիւններ ստորագրելու կառուցութիւնները, առանց իսթաբուլի ՄԱԿի «քարտիկ փոխարէն սննդանիւթ» ծրարի պայմանները: Պատուիրակութեան այցելութիւնը ցուցանիչ է նաեւ, թէ երկու երկրներուն միջեւ կապերը զէպի շերտացում ու սերտացում կ'ընթանան:

Միւս կողմէ, Շարափ օր Պաղտատի օդակայանը էջք կատարեց ուսական օդանավը, որ երրորդն է անցնող երկու ամսուան ընթացքին: Օդանավը կը փոխադրէր ութսուն հոգի: Իրաք հասնողներուն կարգին էին Տուժալի անդամները, գործարարներ, մարդասիրական խմբակներու ու կազմակերպչութիւններու ներկայացուցիչներ եւ ֆուլթայի խումբ մը: Օդանավը կը փոխադրէր նաեւ հինգ թռչող: Օդանավը փակուած էր ուսական իրաքեան ոչ կառավարական

յանձնախումբի մը կողմէ, որ կ'ուզէ մեղմացնել եւ վերջ տալ իրաքի դէմ հաստատուած տասնամեայ պատժամիջոցներուն: Յանձնախումբին նախագահը՝ Եուրի Շահրանիք ըսաւ, որ պատժամիջոցները կը մեկուսացընեն ամբողջ պետութիւն մը եւ ժողովուրդ մը: Ասիկա Նոբելի Շահրանիք:

Ռուսական օդանավուն ժամանումէն մէկ օր առաջ Պաղտատի օդակայանը էջք կատարած էր ֆրանսական օդանավ մը, որ իր կարգին մարդասիրական օժանդակութիւններ փոխադրած էր: Ռուսական ու ֆրանսական օդանավներուն իրաք ժամանումը խիստ ոճով քննադատուեցաւ: Բրիտանիոյ եւ Միացեալ Նահանգներու կողմէ: Ռուսիա եւ Ֆրանսա սակայն կը պնդեն, որ ՄԱԿի Ապահովութեան խորհուրդին կողմէ որդեգրուած բանաձեւ-

րէն ոչ մէկը յստակօրէն կը նշէ, թէ զէպի իրաք ուղղակի թռիչքները (ոչ զինուորական) արգիլուած են:

●ԲԻԻՏԱՆԱՅԻ նախարար մը երէկ նախատեսեց, որ իրաքէն հասած ազդանշանները բաշխելու են եւ նախադրել կու տան, թէ Պաղտատ պատրաստ է բանակցելու ՄԱԿի հետ, զէնքի քննիչներուն իրաք վերադառնալու մասին:

●ԱՄԵՐԻԿԵԱՆ իշխանութիւնները Շարափ օր ձերբակալեցին 45 իրաքցի քրիստոնեաներ, որոնք Մեքսիքայէն Քալիֆորնիա մտած էին եւ ապաստանելի իրաւունք կը պահանջէին Միացեալ Նահանգներէն: Իրաքցիները կ'ըսեն, թէ իրենց երկիրին մէջ կը հալածուէին իրենց կրօնքին պատճառով:

(ՌՈՅԹԸՐԸ)

## ՓՐԱԿԱՅԻ ՄԷՉ ԵՕԹՆԵՐՈՒ ԽՄԲԱԿԻ ՄԻՕՐԵԱՅ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Եօթներու խմբակի երկիրները յատարարեցին, որ պատրաստ են համաշխարհային տնտեսութիւնը պաշտպանելու քարիւղի բարձր սակերու եւ եուրոյի սկարու թեան վտանգներէն:

Փրակայի մէջ տեղի ունեցած միօրեայ հանդիպումին աւարտին հրապարակուած հաղորդագրութիւնը կը նշէր, որ նարտարուեստականացած երկիրներու խմբակը մտանոգ է եուրոյի նախագիծը եւ պատրաստ է գայն պաշտպանելու: Հաղորդագրութիւնը նաեւ կոչ ուղղեց քարիւղ արտադրող երկիրներուն, որ նուազեցնեն սակերը, որոնք տագնապի մատուցած են ամբողջ աշխարհը: Միացեալ Նահանգներու երկրներին նախարար Լորրեն Սամբրոք ըսաւ, որ քարիւղի սակերը համաշխարհային տնտեսութեան կայուն երկիրներին մէջ մեծագոյն ամպն են: Սամբրոք գիտել տուաւ նաեւ, որ Միացեալ Նահանգներու համար անպատեհութիւն չէ, որ գօրծար տոյարի կողքին գոտիին տնտեսայ նաեւ գօրծար եուրո մը:

(ՌՈՅԹԸՐԸ)

**ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ԹՈՐՈՍ ՌՈՍԼԻՆ» ԿԵՐՊԱՐՈՒԵՍԻ ԱԿԱԴԵՄԻԱ**

**2000-2001 ՏԱՐԵՇՐԶԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

Արձանագրութիւնները կը սկսին Երկուշաբթի, 25 Սեպտեմբեր 2000ին սկսեալ, աւելն օր կէսօրէ ետք ժամը 3:00ին 6:00, «Լեւոն Շանթ» կեդրոն:

- Ակադեմիական եւ աշխատանքի դրութիւն:  
- Շաբաթ օրերը մանկապատանեկան զծագրութեան յատուկ դասընթացք:

**ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ԲԱՐՍԵՂ ԿԱՆԱԶԵԱՆ» ԵՐԱԺԵՏԱԿԱՆ ՔՈՒԷՃ**

**ՎԵՐԱՄՈՒՏ**

Քուէճիս 2000-2001 տարեշրջանի արձանագրութիւնները սկսած են եւ կը շարունակուին ամէն օր կէսօրէ ետք ժամը 3:00ին 6:00, բացի Շաբաթ օրերէն:

Վերամուտ՝ 9 Հոկտեմբեր 2000:

ԾԱՆՕԹ.- Նկատի ունենալով երկրի տրնտեսական ծանր վիճակը, տնօրէնութիւնը յատուկապէս տարեշրջանին նախատեսած է կրթաթոշակի սակերու գգալի նուազում սատարելու համար երաժշտական կրթութեան տարածումին:

**ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ**

**Հ.Բ.Ը.ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ**

ԳԱՐՈՒՀԻ - ՅՈՎԿԻՄԵԱՆ (ԵՐԿՐՈՐԳԱԿԱՆ), ՊՕՂՈՍ Գ. ԿԱՐՄԻՐԵԱՆ (ՄԻՋՆԱԿԱՐԳ), ԼԵՒՈՆ Կ. ՆԱԶԱՐԵԱՆ (ՆԱՍԱԿՐԱՐԱՆ)

**2000 - 2001 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՇՐԶԱՆ**

1. 2000 - 2001 ուսումնական տարեշրջանը պիտի սկսի հետեւեալ ժամանակացոյցին համաձայն. ա. Միջնակարգ - Երկրորդական՝ 29 Սեպտեմբեր բ. Նախակրթարան՝ 2 Հոկտեմբեր գ. Մանկապարտէզ՝ 3 Հոկտեմբեր
2. Լրացուցիչ արձանագրութիւնները հին եւ նոր աշակերտներու համար պիտի կատարուին 12 - 22 Սեպտեմբերին, բացի Շաբաթ օրէն, ժամը 9:00էն 12:00:
3. Վերաքննութիւնները եւ մուտքի քննութիւնները պիտի կատարուին 18 եւ 19 Սեպտեմբերին, ժամը 8:00էն 12:00:  
Առաջին օրը՝ գիտական դասանիւթեր, երկրորդ օրը՝ մնացեալ դասանիւթերը:
4. Նոյն օրերուն՝ (Սեպտեմբեր 18 եւ 19) վարժարանի շրջակային մէջ աշակերտները առիթ պիտի ունենան փոխանակելու եւ վաճառելու իրենց դասագիրքերը:
5. Նոր թեկնածուները իրենց հետ բերելու են՝ ա. Նոր իխրած քայտ բ. 3 լուսանկար գ. Նախկին դպրոցի վաւերացուած պետական փուլ եւ վերջին վիճակացոյցը դ. Բարի վարուց հաստատագիր ե. Արձանագրութեան տուրք
6. Դարուիի - Յովակիմեան վարժարանը յառաջիկայ տարեշրջանին ա. Պիտի շարունակել աշակերտ ընդունիլ 7եւ 12րդ դասարաններու համար: բ. Երկրորդական Բ. դասարանը (11րդ), կրթական նոր ծրագիրին համաձայն, պիտի ունենայ երկու բաժին. 1) գիտական եւ 2) HUMANITIES: գ. Պիտի շարունակուի 10րդ եւ 11րդ արուեստից դասարանները: դ. Գ. Երկրորդական դասարաններու (12րդ) դասաւանդութիւնները կը սկսին 20 Սեպտեմբերին:

**Հ.Բ.Ը.Մ.Ի ԼԻՐԱՆԱԿԻ ԿՐԹԱԿԱՆ ՅԱՆՁՆԱՆՈՒՄ**

**ԴՊՐՈՑԻՆ ԲԱՆԱԿԻՆ POINT CARD**

Անցեալ տարի ծանօթացաք POINT CARDին, գնում կատարեցիք, կտեր հաւաքեցիք եւ շահեցաք բազմաթիւ նուէրներ:

Այս եղանակին POINT CARDին միջոցով պիտի շահիք գրեմական պիտոյքներ, որպէսզի աշակերտները դպրոցական տարեշրջանը սկսին ուրախութեամբ:

**MASTER MALLի մէջ դպրոցական տարին ձեզի համար շահաւետ է, իսկ ձեր գաւակներուն համար՝ ուրախ:**

**MASTER MALL supermarket**

**ԽՆԱՅՈՂՈՒԹԻՒՆ ԿԸ ՆՇԱՆԱԿԵ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ MASTER MALL**

Հասցէ՝ Պոլոճ Համուտ, հեռ. 01/254969-8

# ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԱՍՓԻՌԻ ՎԱՅԱՆԻ ՆՈՐ ՇՐՋԱՆ՝ ՆՈՐ ՅԱՅՏԱԳԻՐՆԵՐՈՎ

Հայաստանի Անկախության օրը՝ 21 Սեպտեմբերին, Հայաստանի Ազգային պատկերասփիռի կայանի նախաձեռնությամբ «Ազատության» հրապարակին վրայ տեղի ունեցած հանդիսություններում ընթացքին յայտարարություն անելու Հայաստանի Ազգային պատկերասփիռի կայանի սփռման նոր շրջանի բացումը:

Արտերկրի հայություն համար այսուհետև յրատուական յայտագիրներ կես գիշերին տար պիտի սփռուին Գանի ռուսերենով և անգլերենով: Պատկերասփիռի կայանի հաղորդումները ուղիղ եթերով կարելի է դիտել Գանի Աստրալիոյ և Միացյալ Նահանգներում մեջ:

Հայաստանի Ազգային պատկերասփիռի կայանի նոր հաղորդաշարերն են «20րդ դարու 100 հայերը», «Անկախության այրուքներ» և այլն: Յայտնենք, որ զգալի փոփոխություններ տեղի պիտի ունենան շարժապատկերի ծրագիրներում մեջ. պիտի ցուցադրուին քննարկով ժապատկերներ շարժապատկերի աստղերու մասնակցություններով, իսկ «Տնայիքում» գիշերային երաժշտական յայտագիրը պիտի անկախացուի նոր ռոնով:

# ՇՈՒՇԻ «ՎԱՐԱՆԴԱ» ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԵՐՈՒ ՆՈՐ ՀԱՄԵՐԳԱՇԱՐԸ



Շուշիի «Վարանդա» մանկապատանեկան երգչախումբը:

Օգոստոս և Սեպտեմբեր ամիսներում ընթացքին Արցախի տարբեր շրջաններում մեջ համերգային նոր յայտագիրով հանդես եկած են Շուշիի «Վարանդա» մանկապատանեկան և Երիտասարդական երգչախումբերը, ղեկավարությամբ Ջաքար Քելչիշեանի:

Այս ամառ «Վարանդա» պատրաստած է մատուցած է 11 ելույթներ՝ իր շրջապատյունը մեջ ներառելով Գանձասար ու Քարինապար, որում եկեղեցույ վերաբացման առիթով տուած է յատուկ համերգ մը:

Սեպտեմբերի 8ին և 9ին Ստեփանակերտի և Շուշիի եզրափակիչ համերգներում հիւրաբար ներ-



Շուշիի «Վարանդա» երիտասարդական երգչախումբը ելույթին պահում:

կայ եղած են Հայաստանից տասնեակ մը ականաւոր բանաստեղծներ և երգահաններ, որոնք վերջին ութ տարիներում ընթացքին հարիւրէն արելի նոր երգեր յորհնած և ձօնած են «Վարանդա» և «Վարանդա» համերգներում պաշտօնական հիւրերու շարքին եղած են Արցախի մշակույթի և կրթության նախարարները, որոնք յառաջիկայ տարում համար «Վարանդա»-ին հետ համատեղ ելույթներու հրաւեր տուած են Պէրոյի Համազգայինի «Կարկաչ» երգչախումբին: Ներկայ գտնուած են նաև Մեծն Բիտանիոյ Լորտերու պալատին փոխ խօսնակ Քարոլայն Քոքս և Լոնտոնի Ակադեմիայի նուագախումբի ղեկավար Ռիչարդ Սթանֆի, որ առաջարկած է իր նուագախումբին և «Վարանդա»-ին համատեղ ելույթները Ղազանչեցոյ Աննափիլիի տաճարին մեջ, քրիստոնէութեան պետական կրօն հոշակման 1700ամեակին առիթով:

Արցախի մասնւոյ գործակալութեանց տուած իր



Ստեփանակերտի մշակույթի պալատ, 8 Սեպտեմբերին:

հարցազրոյցին մեջ վիճակին մասին խօսելով՝ Ջաքար Քելչիշեան յայտնած է, որ երգչախումբը անցնող ութ տարիներու ընթացքին տուած է 111 ելույթներ՝ Արցախի, Հայաստանի և Լիբանանի մեջ, որոնց ներկայ եղած են բազմահազար աշակերտներ, ազատամարտիկներ, ուսուցիչներ և երաժշտասերներ: Կատարած է 179 երգեր, որոնց մեծ մասը՝ առաջին կատարումներով: Աւելի քան 200 երեխաներ իրենց մանկությունում ու պատանեկությունում երգերը գտած են երգչախումբին անդամակցութեան շնորհիւ, տասնեակ սաներ իրենց ուսումը կը շարունակեն երաժշտական թեքումով, տասնեակ ելույթներ տրուած են Արցախի, Հայաստանի և Լիբանանի պատկերասփիռները և ձայնասփիռները, և երգչախումբին մասին պատրաստած է վաերագրական մէկ ֆիլմ: Իսկ այս տարի երգչախումբը արժանացեր է պետական ճանաչումին:

«Վարանդա»-ի այս տարուան համերգաշարը հովանաւորուած էր Լիբանանի՝ Արցախի Օժանդակութեան Մարմնի կողմէ:

# ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՌԵՍՈՒՄԱԿԱՆ ԽՈՐԸՈՒՐԴԻ ԱՏԵՆԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՃԻՆՊԱՇԵԱՆԻ ԸՅՏ «ՄԵՐ ԴՊՐՈՑՆԵՐԸ ՊԻՏԻ ՊԱՀՊԱՆՈՒԻՆ: ՈՉ ՈՔ ԻՐԱՒՈՒՆՔ ՈՒՆԻ ԱՅՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԵՆՔԻ ԽՈՒՍԱՓԵԼՈՒ»:

ՀԱՐՑՈՒՄ. - Յառաջիկայ տարեշրջանին համար ազգային վարժարաններում ուսուցիչները ենթարկուած է փոփոխութեան: Կատարուած են վերադասարանումները և փակուած են դպրոցները: Ի՞նչ ունիք ըսելիք այս մասին:

ՊԱՏԱՍԽԱՆ. - Ազգային վարժարաններում փակման հարց չկար: Այս ուղղութեամբ, երբ քանի մը ամիս առաջ ազգային վարժարաններու վերադասարանում մասին որոշումներ կայացան, մենք մատուցող բացառութեամբ կատարուածք: Յիշողութիւնները թարմացնելու նպատակով անգամ մը եւս կրկնեմք:

Միակ վարժարանը, որ Ուսումնական խորհուրդին որոշումով փակուեցաւ, Ազգ-Կիրիկեան վարժարանն էր: Այս որոշումը տրուեցաւ ոչ թէ որովհետեւ այդ վարժարանը անկարելի էր, այլ Ուսումնական խորհուրդը որոշած էր Պուրծ Համալսարանի վարժարանները համախմբել եւ այսպիսով դպրոցական ընդհանուր ծախսերէն բան մը պակասեցնել, ինչպէս նաեւ՝ Կիրիկեան վարժարանի շէնքը տնտեսական նպատակներով սցտագործել:

Եղան նաեւ մասնակի ուղիղ կարգադրութիւններ: Գ. Չաթարաչեանի միջնակարգ բաժինը փոխադրուեցաւ Լ. Ե. Ս. Յակոբեան վարժարան: Գ. Չաթարաչեանի այդ բաժինը շատ փոքրացաւ և եւ ծախսերը մեծ են: Այդ բաժինին Լ. Ե. Ս. Յակոբեան փոխադրուածով կարելի եղաւ խնայել այդ ծախսը՝ առանց ակցնելու Լ. Ե. Ս. Յակոբեանին ծախսերը: Նմանօրինակ այլ դասարանում մը եղաւ Ազգ-Արցախեան վարժարանի պարագային, որուն միջնակարգ բաժինը (Ֆրանսերէն) նոյնպէս փոխադրուեցաւ Լ. Ե. Ս. Յակոբեան վարժարան:

Ասոնք առաջին քայլերն են Պուրծ Համալսարանի շրջակայքին մէջ ազգային մեր բոլոր դպրոցները դպրոցական մէկ հիմնական կառուցի մէջ միասնաբար որոշումին, որուն գործադրութեան աշխատանքները անմիջապէս սկսան: Ազգային մեծ վարժարանին շինութեան առնչութեամբ ամրան ընթացքին Ազգային Գաւառական Ժողովը ունեցաւ երկու բացառիկ նիստեր, որոնք ընթացքին քննարկուեցան շէնքի կառուցման եւ ֆինանսաւորման հարցերը: Յառաջիկայ ամիսներուն ուրախութեամբ կրնանք յայտարարել, որ այս վարժարանին շինարարական աշխատանքները կրնան սկսիլ:

Հ. - Ի՞նչպէս կրնաք բացատրել այդ գալիս վարժարանները կամ անկոնցմէ բաժնիներ փակելու որոշումը:

Պ. - Այս երեւոյթը եւս բացատրուած է: Եթէ դպրոցներ փակելու որոշումին պատճառով շրջան մը ամբողջովին դրպրոցէ գրկուէր, այդ որոշումը անընդունելի կ'ըլլար: Բայց նկատի ունենալով, որ այսօր մեր համայնքը իր թիւով եւ տեղաբաշխումով այնչէ, ինչ որ էր տասնհինգ - քսան տարի առաջ, պարտաւոր ենք մեր ներկայի պայմաններուն պատշաճեցնելու մեր դպրոցական ցանցը:

Հակառակ պարագային, անխուսափելիորէն ստեղծուած դժուարութիւնները կը բազմանան: Այդ դժուարութիւնները սրբագրելու մտահոգութեամբ կատարուած են դասարանները: Մենք պատասխանատու ենք յարուցելու որ ուսումնական համար եւ չենք կրնար թոյլ տալ, որ դպրոցական այդ ցանցը կ'ընդունուի պակաս, ընդհակառակը: Այս համախմբումը մեր ներկայի պայմաններուն պատշաճեցնելու մեր դպրոցական ցանցը: Չենք ուզեր, որ մեր դպրոցներէն աշակերտ պակասի, ընդհակառակը: Այս համախմբումը կ'ընդհանրուի կ'ընկերակցին ազգային վարժարաններուն մակարդակը բարձրացնելու հետեւողական ճիգերը:

Հ. - Կը իրօտի ուսուցիչներու ամալակներուն ոչ կանոնաւոր վեճարումին և կրթական մարզի օրնաօրեան փոփոխութեան գործադրութեան մասին: Որո՞նք են այս երեւոյթի տուել տուող պատճառները և ի՞նչ քայլերու կը դիմէք ատուելու լուծելու համար:

Պ. - Ընթացիկ երեւոյթը դարձաւ մեր դպրոցներուն մէջ ուսուցիչներուն եւ պաշտօնէութեան մասնակներու անկանոն վեճարումը: Գործընթացն անկանոնները նուազած են, մեր ծնողները առհասարակ վեճարելու դժուարութիւն ունին կամ կ'ընտրուին իրենց պարտականութիւնը կատարել: Նուազած են նաեւ մեր արտաքին եկամուտները. տնտեսական ընդհանուր տագնապին պատճառով դուրսէն եկող օժանդակութիւնները նուազագոյնի իջած են:

Այս պայմաններուն մէջ դպրոցները չեն յարգիլ օրին վճարել մասնակները:

որ, որոնք կը կուտակուին: Նաեւ այս տեսակի դժուարութիւնները մտածելու տան, որ մեր ծախսերը պէտք է առաւելագոյն չափով կրճատենք:

Անոնք, որոնք չփոքմ կ'ունենան մեր դպրոցներուն եւ տնօրէնութիւններուն հետ, կը նկատեն, որ կայ մեծ յուսարեկութիւն մը: Այսօր ոչ ոք կ'ուզէ ստանձնել այդ պատասխանատուութիւնը: Մեր տնօրէնները շատ յաճախ փոխանակ ուսումնական - կրթական գործընդգրգողութեան, ամէնօրեայ ճիգ կը թափեն իրենց դպրոցներուն նիւթական ապահովելու համար: Այս պատճառով է, որ ազգային վարժարաններէն ոմանք տնօրէն չունին:

Անցնող շաբաթներուն ընթացքին այս առումով փոփոխութիւններ տեղի ունեցան: Այսպէս՝ Ազգ-Լ. Ե. Ս. Յակոբեան վարժարանին հրաժարած տնօրէնին փոխարէն նշանակուեցաւ Ազգ-Ս. Խանա-միրեան վարժարանի տնօրէն Յակոբ Բագրատունի, Խանամիրեանի տնօրէն նշանակուեցաւ Ազգ-Կիրիկեան վարժարանի տնօրէն Ճորճիկ Թաստիկյանն: Յառաջիկայ օրերուն տնօրէն պիտի նշանակուի Ազգ-Գ. Չաթարաչեան վարժարանին համար: Յոյսով ենք, որ շուտով կը լուծուի նաեւ Այնճարի Ազգ-Գ. Կրկնակեան դպրոցին տնօրէնի հարցը:

Վարժարաններու համախմբումին պատճառով որոշ թիւով ուսուցիչներ պիտի տեղափոխուին այլ վարժարաններ: Ուսումնական խորհուրդը որոշած է նոյնիսկ գործողութիւններու գնով խնդրող աւարկայ ազգային վարժարաններուն ուսուցիչները կամ պաշտօնէաները անգործ չթողուլ:

Հ. - Վերամուտին նախորակելի նկատելի է հայ աշակերտներու դեպի օտար կամ ոչ տեղական վարժարաններ հոսքը: Ի՞նչ է այս երեւոյթի տարրաբանը և ի՞նչ կրնանք ընել զայն կասեցնելու համար:

Պ. - Այս երեւոյթին մասին ճշգրիտ տեղեկութիւններ չունինք: Սակայն ազգային վարժարաններու տնօրէնները մտահոգ են իրենց գաւառներուն փոխանցման արտօնագիրը պահանջող ծնողներուն դիմումներով:

Նշենք, որ այս երեւոյթը միայն հայերուն չի վերաբերիլ, այլ համատարած է եւ սկսած է ազդել իրանական ամէնչէն համարաւոր վարժարաններուն:

Միւս կողմէ, իրողութիւն է, որ պետական վարժարաններ միջոցներ չունին ընդունելու աշակերտներուն այդ հոսքը: Նաեւ չեն կրնար այդ երեւոյթներուն նոյնիսկ իրանական ատուածով լաւ դաս տիրաւորութիւն ջանալ: Ի՞նչպէս պետական վարժարաններ այս ալիքը հետեւեանք է ամբոխավարական փոփոխութեան միջոցներով յաջողութեան ձգտող քաղաքական անձնաւորութիւններու տարած ճիգին:

Իսկ առեւտրական նպատակներով գործող պետական վարժարանները հայ աշակերտ ապահովելու մտահոգութեամբ կը դիմեն նոր խնայքերու: Անոնք հայերէնի դասապահներու միջոցով «կը հրաւիրեն» մեր բարեկեցիկ ընտանիքներուն գաւառները: Այսպիսով, այն նիւթականը, որ կրնար հոսիլ դէպի ազգային դպրոցներ, կ'ուղղուի դէպի անձնական օտար վարժարաններ:

Այս երեւոյթները աղէտի տարողութիւն ստացած են: Մտողները պէտք է դիտարկուին, որ պետական վարժարաններուն մէջ իրենց գաւառները անհրաժեշտ մակարդակով ուսում չեն ստանար:

Նաեւ անոնք պէտք է մտածեն, որ քանի մը տարի ետք բնականաբար իրենց եւ իրենց գաւառներուն միջեւ պիտի ստեղծուի անջրպետ մը:

Իսկ ինչ կը վերաբերի նիւթական, ծնողները կը կործեն, թէ պետական վարժարանը գիրքը կը ձեռագրատէ նիւթական մտահոգութիւններէն: Յաճախ եթէ բաղադրուելու ըլլաք մեր դպրոցներուն իրողապէս գանձածք են պետական կամ ոչ պետական դպրոցներուն գանձածք, կը տեսնենք, որ նոյնիսկ պետականներուն պարագային աւելի կը վճարեն:

Տարիներ առաջ մեր ժողովուրդը կենսաբնական կրթութեան համար պայմանները չունէր: Մեր տուններու ու դպրոցները թիթեղածածկ էին, մեր հագուստները՝ կարկուտաւոր, բայց կար ազգային հպարտութեան ու պարտականութեան գիտակցութեան ոգին, որ պէտք է վերադառնալ:

Այս դպրոցները պիտի պահպանուին, որովհետեւ անոնք ստեղծուած են առողջ հայ սերունդը պատրաստելու համար: Ոչ ոք իրանականը չունի այդ պարտականութեան խոստովանումը:

# ՄԵԾԻ ՏԱՆԸ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻ 2000ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴՍՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Արամ Ա. կաթողիկոսի տնօրինութեամբ, Հինգշաբթի, 14 Սեպտեմբերին, Նարեկ Ծ. վրդ. Ալեքմէլեան հոգևոր մեջ մասնակցեցաւ Քրիստոնէութեան 2000ամեակին առիթով հայ կաթողիկէ եկեղեցույ կողմէ կազմակերպուած հայածէս արարողութիւններուն, որոնց նախագահեց կաթողիկէ հայոց Ներսէս - Պետրոս ԺԹ. կաթողիկոս-պատրիարք:

Արարողութիւնները ընդգրկեցին Յովհաննէս - Պողոս Բ. պապին հետ հանդիպում մը՝ Վատիկանի մէջ, երեկոյեան ժամերգութիւն՝ Ս. Խաչ եկեղեցույ մէջ, Ս. Խաչափայտէ մատուցող թափօր և անդաստան՝ Ս. Յովհաննէս Լատերանեան տաճարին մէջ:

Նարեկ Ծ. վրդ. Ալեքմէլեան տեսակցութիւն մը ունեցաւ Վատիկանի միջեկեղեցական յարաբերութիւններու ընդհանուր պատասխանատու կարտիսալ Էտուար Քասիտիի օգնականներէն Ֆրոնթիս Էպիսկոպոսին հետ:

# «ՍԻ. ԷՆ. ԷՆ.» ՊԱՏԿԵՐԱՍՓԻՌԻ ԿԱՅԱՆԸ ՊԻՏԻ ՀԻՐԸՆԿԱԼԷ ԹՈՒՐԲԻՈՅ ՎԱՐՉԱՊԵՏԸ

11 Հոկտեմբերին «ՍԻ. ԷՆ. ԷՆ.» կայանը պիտի տնակատարէ Թուրքիոյ մէջ իր հիմնադրութեան առաջին տարեդարձը: Այդ առիթով Թուրքիա պիտի ժամանեն ՍԻ. ԷՆ. ԷՆ. ի բարձրաստիճան պաշտօնատարներ, որոնց շարքին «Քլու Էնտ Էյ» (Քուէսէնլիգ Էնտ Էնտըրզ) աշխարհահռչակ յայտագիրին հաղորդավարը՝ Ռիզ խան:

10 Հոկտեմբերին Ռիզ խան իր յայտագիրին ընթացքին պիտի հիւրընկալէ Թուրքիոյ վարչապետ Պիլիկնիթ Էնտըրզը: 40 վարկեան տնտեսութեամբ եւ ուղղակիօրէն ամբողջ աշխարհի տարածքին սփռուող այս յայտագիրին ընթացքին Էնտըրզը պիտի պատասխանէ իրեն ուղղուած հարցումներուն:

Յայտագիրը դիտողները կրնան իրենց հարցումները Էնտըրզի ուղղել հեռաձայնով կամ ի - մէջով:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ ԿԸ ԽՆԴԻՐԵՆ

- 15 Սեպտեմբերին Հայաստանի բոլոր շրջաններու Հայրենակցական միութիւններուն կողմէ անցուցուած զանազան միութիւններուն որդի գրած ուղիւն:
- Իրենց նպատակներուն եւ ռազմավարութեան մեծ նմանութիւններուն պատճառով Հայրենակցական միութիւնները որոշեցին կազմել միութիւն մը միացեալութեամբ բարեխաչ Հայաստանի քաղաքացիներին կենսաբ. ինչպէս նաեւ՝ երկրին բարոյական ու հոգեբանական միջնորդութիւնը:
- Ազգային տնտեսութեան կանաչեցումը եւ այս առնչութեամբ Սփիւռքի
- Հայրենակցական միութիւններին խրնորելու համար խորհրդակցութիւններու անուսով հրապարակուեցաւ կողմը:
- Արժուաբոյն Զէյթունցի Գարդման Զաւախը Զրաբերդ Կալան
- Կարին Խաչէն Խաչտարակ Նախիջեան Շահումեան Թումանեան Ուտիք Վարանդա Վասիլուրական Նոր Սերունդ

# ՌԻԽՏԱՒՈՐԻ ՆՈԹԵՐ

## (ՀԱՏՈՒԱԾՆԵՐ)

ԷՐԶՐՈՒՄ

Չարթթ, 23 Սեպտեմբերի թիւով յայտնած էի՞նք, թէ 16ԵՆ 27 Օգոստոս ուխտագնացութիւնը մը տեղի ունեցած է դէպի Արեւմտահայաստան: Այս առիթով ուխտագնացութեան կազմակերպիչ Սեւրոպ արք. Աշնեան ուղարկած է «Ուխտաւորի նոթեր» ծաւալուն ուղեգրութիւնը:

Ստորեւ կու տանք ուղեգրութեան հատուածներ՝ դարձեալ ուշադրութեան հրահրելով այն վկայութեան վրայ, թէ Ազիի աներակները սկսած են խարխիլ Ախուրեանի հայկական ակիւն կատարող քարահանքի պայթուցիչներուն պատճառով ցնցուցիչներն:

Թաղուած են մեր ոսկիները: Ուր որ գացինք, նոյն խննդն ցանկութիւնը կար՝ ալթո՛ւն, ալթո՛ւն... Մեր ոսկի աշխարհը առեր նստեր են, մեր ոսկեղաշտերը անպատի են վերածեր, մեր հողերու տէրն են եւ կ'ուզեն, որ մեր հայրերու ոսկին այ գտնենք եւ տանք իրենց: Ազահուցիները սահման եւ երկինք չունին:

### ՆՊԱՏ

Վերջին ակնարկ մը Նպատ լերան: Մեր Սուրբ Նշան վարժարանի հայոց պատմութեան անկրկնելի ուսուցիչը կը յիշեմ, պրն. Երուանդ Պետրոսեանը, զինք ճանչցողներու համար՝ «ժիպիս չկա», որ մեր դասարանի մէջ, ձեռքերը վեր բարձրացուցած, կը պատմէր, թէ ինչպէս 371 թուականին պարսից զէժ մղած ճակատամարտին՝ Ձիւրաւի զաշտի ստորոտէն հայոց Ներսէս հայրապետը Մովսէս մարգարէին ման Նպատի վրայ ձեռքերը կը բարձրացուցէր՝ եւ հայոց գործերը յաղթանակ յաղթանակ կ'երթային, ու ձեռքի նոթերու մէջ կը կարդամ: «Իսկ Պապ թագաւորն ու Ներսէս եպիսկոպոսապետը կանգնած մնացին Նպատ լերան վրայ, եւ Սուրբ Ներսէս իր մշտատարած ձեռքերը բարձրացնելով խնդրում կը Տիրոջը, որ խնայէ իր (հաւատացեալներին) ուխտին եւ իր սուրբ եկեղեցիներին: ... Մինչ նա աղօթում էր Աստուծոն, հայոց բոլոր գործերի ճակատը կրակին ման գնում էր պարսից գործերի դէմ»:

Քիչ անդին ճուճան գիւղն է: Չորս եկեղեցի ունէր, ամէնէն մեծը՝ Սուրբ Աստուածածին: Հիմա՛ քիւրտի մը տան բակին, գամփուր մը դաժան հաջողին ներքեւ, կը փնտռենք սիւն մը այստեղ, խոյակ մը այնտեղ:

Բագրեւանդ զաշտին մէջ այդ օր մեր այցելած վերջին գիւղը Անգղն է: Այն ատեն այ դժուար կը հնչէինք: Անգղ. Անգղ գիւղ. Ղեւնդ Երկնց եւ 700 մոզեր: Վարդանանց ճակատամարտի նախօրէին՝ Ղեւնդ Երկնց կը, որ ճիշդ, ճիշդ այս գիւղին մէջ, իր ժողովուրդին գլուխն անցած, ջարդեց գլուխները այն 700 մոզերուն՝ որոնք Պարսկաստանէն Հայաստան եկեր էին, որպէսզի նորադարձ հայոց եւ նախարարներուն սորվեցնէին Որմիզի կրօնը եւ ատրուշանի կրակին պաշտամունքը:

### ԱԳՊԱՄԱՐ

Բագրեւանդի զաշտը թողուցինք մեր ետին եւ Բերկրիի դարձով հիւսիսարեւելեան կողմէ մօտեցանք Վանայ լճին: Հետզհետէ մեր աչքերուն բացուեցաւ հրաշք յի՞ծը՝ իր անմասն եղբորներով, ամէն բոլոր տարրեր երանց ստացող կապոյտով: Մինչ այդ՝ մենք հագիւ կը հասնէինք մեր պատմարաններուն եւ աշխարհագրագէտներու բացատրութեանց, որոնք մէկը միւսի ետեւէն մեզ կը գնդակոծէին մեր պատմութեան դրուագներով, լեռներով, գետերով, դէժերով: Վասպուրական աշխարհ, Վան, «Գայ տարի Վան», խրիմեան Հայրիկ, Արամ Մանուկեան: Հրաշք աշխարհ է, եւ ի գուր չէ, որ վանեցին ճամբարներէն կ'ըսէ՝ «Այս աշխարհի մէջ Վան, միւս աշխարհի մէջ դրախտ»:

Վասպուրական աշխարհի մեր առաջին կանգաւոր եղաւ Լիմ Կտուցի հանդիպակաց քաղաքը: Յարաբար փոքրիկ կողմ մըն է, ու հետուէն շատ բան այ չնշմարեցինք: Բայց ի՛նչ վանք էր եղած: Մենաստան, 100ի չափ միաբան, օրը 7 անգամ ժամերգութիւն: Հիմա՝ Վերջերս Երեւանի մէջ պատահար գնեցի Լիմ անապատի վանքին պատկանող արժաթապատ աւետարան մը: Ափսոս, որը մըն է այս Աւետարանը, վերջին մնացորդը Լիմի անապատին:

Յաջորդ հանգրուանը Վարագն է: Մինչ մեր ուխտաւորներէն շատեր տրտում եւ հետաքրքիր կը նկարեն, կը զիտեն, կ'արձանագրեն ամէն քար ու խաչքար, քանի մը ընկերներով, գիւտը կ'ընենք երրորդ եկեղեցիի մը: Հիմա գտանք Սուրբ Գէորգի կից Սուրբ

Նշան մատուռը, որ գրեթէ կանգուն է, գմբէթը փայտերով ծածկուած: Բայց ներսը ուրիշ տիրութիւն մը կայ: Հաւանաբար երկար տարիներ յարդանոց է եղած: Հիմա՛ շատ խոնաւ է, կարծես քարայր մըն է, ու միայն սարդի ոստայնները ամբողջ եկեղեցին գրաւած են՝ կարծէք պայտ մը թլոյ՞լ ուր 100 տարի մարդ կոխած չէ: Ու Հիմա՛ լուսանկարներու մէջ կը դիտեմ, թէ ինչպէս յոյսի ճառագայթներ կը պատուեն մուծն ու ոստայնները:

(Նեմրուժ սարի փէշերուն գրտնուող՝ Սոսի Մայրիկին ծննդավայր թեղուտ գիւղին մէջ) կը նստինք աղբիւրին մօտիկ: Քիւրտ հօտադներ իրենց այժերն ու ոչխարները կը լուցեն, մենք մեր հացն ու պանիրը կ'ուտենք, եւ ապա սանձ դրած մեր գագայուներուն վրայ՝ ճամբայ կ'ելլենք: Ուղին երկար է... Քիչ մը պտտահարար, խոստովանիմ, կը մտնենք գիւղ մը, ուր մեզի բռնին, որ մզկիթի վերածուած եկեղեցի մը կայ: Ինչպէս գիտեր: Հիմա գիտենք: Գիւղը՝ Փրիտու, գիրքերու մէջ ծանօթ, հայ յեղափոխութեան պատմութեան մէջ ծանօթ: Ժամանակներն էին, որ մեզի թեղադրեր էին այցելել այդ եկեղեցին՝ մինչեւ որ իրենք մեր անձնագրիները ստուգէին: Խորքին մէջ չէին այ ուզեր, որ այդ գիւղին մէջ շարունակ ինք մեր ճամբար դէպի Բուլանուխ, քանի շատ վտանգաւոր էր: Գիւղապետը մեզի ընկերացաւ ու տարաւ յանձնեց մոլլային: Մոլլան մէջ մը ապահով, որ մեր կոչիւնները հանցինք, մեզ պտտեց մեր եկեղեցու մէջ, ցոյց տուաւ խորանը, աջակողմեան խորան մը կար: Ներքեւ՝ խոչործակ մը եւ չրացատրեց, բայց հասկացայ, որ այդ կողմերը ոսկի փնտռեր են: Արեւմտեան դուռը ճաղերով փակուած է, ամէն կողմ մ'իմուտէր կայ, եւ խորանին մէկ անկիւնը աղքատիկ արձանագրութիւն մը՝ հայերէն: Եւ վկան այդ եկեղեցու կենտրոնն է մահաւան: Լուս աղօթք մը: «Թորոս աշխատողին յշ. ի Քրիստոս»։ Թուականը՝ 1424: Այլ թուականներ այ կան: Արամ Քայանթարեանը ինծի՛ցոյց կուտայ կարգ մը հնագոյն արձանագրութիւններ, եւ հիւսիսարեւմտեան կողմը՝ եկեղեցու հիմքերը, առաջին երեք շարք քարերը, սասուն քարեր են: Տրտմօրէն հրաժեշտ կուտանք այս գիւղին, քիչ մըն այ միսթարուած որ եկեղեցին մզկիթ է, չէ քանդուած: Ծամրուն վրայ՝ Պաթնոսն է:

### ՄՈՒՇ

Սուրբ Յովհաննէսի մէջ կը հանդիպինք, ի վերջոյ, հայու մը: Արմէն է անունը ու կը համբուրենք, կը սիրենք գիրար: Կինն այ հայ է: Հայաստանի հետ կաշիի աւելուող կ'ընէ: Հարցաւոր տեսանք, ան այ Հայաստանի հետ կապեր ունի: Միլիոնէն մէկը, պիտի ըսէի իմ վաղեմի տնօրէնս՝ Եղուարդ Տարսեանը, իր մէկ պատմուածքին մէջ: Բայց քանի՛ քանի Արմէններ կան, Ռեճեպներ կան, Ռամազաններ կան, որոնք կարօտ են Հայաստանի ռատիոյ ձայնին, եւ հպարտ պիտի ըլլան, եթէ երեկոյ մը իրենց տան հեռուստացոյցը բանան եւ լսեն հայերէն երգ ու պար, հայոց պատմութիւն, իրենց երկրին ու հողին պատմութիւնը: Հիմա կը յիշեմ մեզի ընկերացող գլուխը Սպոյն: Երբ իր տպաւորութեանց մասին կը խօսէր՝ Վալիկ վրացական սահմանի սպասման անցքին մէջ, չեղտեց հետեւեալը: «Մուշի մէջ հանդիպեցայ քիւրտի մը, որ երբ իմացաւ, թէ հայ եմ, բռնեց ձեռքերս, շօշափեց, ճամբուրեց զիս եւ ըսաւ՝ Ես եմ հայ... դրսի հայի չէի տեսած... աչքերը դուրս եկան, պիչ-պիչ կը նայէր ինծի... ու աւելցուց՝ 24 տարեկան եմ, գինուորութիւն չեմ ըրած... պիտի գնամ Հայաստան, աղջիկ առնեմ»: Եւ կը յիշեմ ուրիշ պահ մը, երբ նոյն այդ կորսուած հայր, թէ արդէն իսկ ինքը քիւրտը, որ պատմութեան այ տեղեակ է, մեր Աշունդի դիմաց իր ձեռքի գաւազանը գետին կը խփէ եւ երկիցս կ'ըսէ: «Պո՛ թոփրաք էրմ'եցի տըր» (այս հողը հայկական է):

Բաւականին ուշ կը վերադառնանք Մուշ: Քանի մը հողով կը քշենք դէպի Մշոյ հայկական թաղերը: Իրարու վրայ դիզուած տուններ, հնաւանդ ընկալարաններ եւ քանի մը հայկական թաղեր, որոնք հիմակուան քիւրտներուն այ ծանօթ են: Բրայի թաղ, Մինարու թաղ, Կարնիկի թաղ: Նոյն այս թաղին մէջ կ'այցելենք հայ կաթողիկոսներու եկեղեցին: Մեր քիւրտ առաջնորդը կը փափաքի տուն մը տանիլ մեզ, ուր խաչ-



Մշոյ հայոց գերեզմանատան տապանաքարերէն մէկը:

քար մը կը պահուէր: Գացինք, դիտեցինք: Երբ դուրս կ'ելլէինք, նոյն շէնքի երրորդ յարկի պատուհաններէն մէկը ցոյց տուաւ փողոցին դիմաց բացուող բլուրը եւ ըսաւ, որ հայոց գերեզմանատունն է, եւ աւելցուց՝ այնտեղ Գէորգ Չաւուշը կը քնանայ: Յաջորդ օր մեզմէ ոմանք փորձեցին գերեզմանատուն երթալ եւ փնտռել Գէորգի գերեզմանը:

### ԳԵԼԻԳՈՒԶԱՆ

Գելիցուցանի գիւղապետը մեզի կը ներկայացնէ գիւղը, գիւղին տունները: Լաւատեղեակ անձ կ'երեւի, եւ որոշ չափով ընկան է: Մեզի ցոյց կու տայ իսրայի տունն ու բլուրը, Պետոյի տունը, կարգ մը թաղեր, որոնցմէ յաւ կը յիշեմ Միսթարի թաղը: Յետոյ կը բարձրանանք եկեղեցի: Կէսը գոմ է, կէսը մարագի պէս բան մը: Անկիւնը՝ մկրտութեան աւագանն է: Կանգնած ենք այնտեղ, ուր թաղուած է Սերոբ փաշայի մարմինը, ուր թաղուած էր Հրայր Դժոխքը:

Դժուարութեամբ երիտասարդ մը կը ճարենք, որ մեզի կը խոստանայ յարողը՝ Հինձք գիւղը տանիլ եւ միսթարի մեզ: Հինձքը քաղաքապետարանի մէջ պաշտօնեայ ազգական մը ունի: Երկուքով այ բան մը չեն կրնար ընել: Հինձքի վայրն այ չկայ, յիշատակն այ չկայ: Բայց տարրինակ կերպով մարդը կը յիշէ «Ռոմսիմեան» անունը: Հոսիսիմեանք: Ճիշդ է, այն քաղցր օրերուն էր գրուածի հայերը ամառը Կիրակիներուն կ'երթային դէպի հիւսիս ու բնութեան գեղեցիկ գրուն մէջ: Ջրով էի մը հարեւանութեամբ, կը վայելէին «Հոսիսիմեանք» անուն քարայրները: Ըստ աւանդութեան, Հուսիսն դէպի Հայաստան իրենց փախուտին ընթացքին, քանի մը օր այստեղ պահուրտած են, եւ ատկէ այ ժողովուրդի աւանդութեան մէջ մնացած է «Հոսիսիմեանք» քարայրները: Հիմա թուրք պաշտօնեան ինծի կը յիշեցնէ շայն եւ իսկապէս անկեղծ կերպով կը քննարկէ, որ գինուորական գոտի է: Բազմաթիւ հասցէներու դիմելէ ետք հիմա հեռախօսի վրայ է շրջանի կայապետի պետին հետ: Գնդապետը անգլերէն այ կը խօսի, եւ ուրեմն հեռախօսը ձեռք է, որ ես այ համոզեմ գնդապետը, որ մենք անմեղ բուրխներ ենք, եկած ենք պտտելու եւ աղօթելու: Մաքուր անց լեռնով կը շարունակէ հետս եւ կը պնդէ, որ իրեն յայտնեմ «the real reason» ի՛նչ է իրական պատճառը այս հասցիութեան: Կը պատասխանեմ, կը համոզեմ, կը համոզուի երեւի եւ կ'արտօնէ, որ առաջնորդի մը օգնութեամբ երթանք եւ այցելենք Հոսիսիմեանց մատուռները, բայց նկարել՝ եսաք... Ասոր այ փառք ինքնաշարժները կը նստինք եւ կը սուրանք դէպի առաջ: Քարայրները կը գտնուէին բարձունքի մը ետին: Եւ առաջին անգամի համար մենք կամօրէն հրաժարեցանք, եւ այնտեղ, գինուորական գոտիի մէջ, Հոսիսիմեանց կոյտերու ականջին հասնելու չափ մօտիկ տեղ մը սկսանք երգել Կոմիտաս կաթողիկոսի Յ18 թուականին գրած շարականը:

«Անձիկն Գուրիսիք սիրոյն Քրիստոսի...»



Ժամերգութիւնը՝ Առաքելոց վանքի աներակներուն մէջ:

Իր մեծ բանակով կանգ առնելով Կուր գետի մօտ, նա գոռոզարար ծխով սծելու համար: Արասն իր բանակը տանում է նրա դէմ եւ կանգ է առնում նրա հանդիպ, Կուրի աջ ափին: Արխանները մեծ բազմութեամբ անցնում են գետը եւ ասպատակներ փուռում: Արասը յարձակուում է նրանց վրայ, ետ է մղում մինչեւ գետի մէջտեղը մե մեծ կոտորած է անում, որի մէջ ինքն էր առաջամարտիկը եւ անձնական քաղցութիւններ շատ ցոյց տուեց: Այնուհետեւ անցնելով միւս ափը՝ նա ցրում է թշնամու բանակը, Բերիս գետի է բրուում եւ տանելով Կարս, ցոյց է տալիս նրան իր կառուցած եկեղեցին եւ ասում է, որ յաւ տեսնի, այդ այն եկեղեցին է, որ նա ուզում էր սծել իրրեւ քաղկեդոնիկ: Ապա հանել է տալիս նրա աչքերը: Արխանները գնում են իրենց կողմ թաւաւորին եւ այնուհետեւ զորքեցնում են իրենց ասպատակիչ արշաւանքները դէպի հայոց աշխարհը»:

### ԱՆԻ

Բայց այսօր՝ անշնորհք աշակերտի մը պէս կանգնած եմ Անիի պարիսպներու մուտքին, եւ կը լսեմ յանդիմանանք թուրք ճարտարագետուհի Տիֆի մը, որ այնտեղ է եկած՝ որովհետեւ 19 Օգոստոսին Ֆրանսացիներու հետ միասին պիտի սկսին Մայր տաճարի պաշտպանութեան եւ պահպանութեան գործին: Կինը վրդովմունքով կը խօսի, եւ առիթէն օգտուելով մեղադրանք այ կը դնէ, որ դուք՝ «պահանջատէրերը», «իրաւատէրերը», «Անիկառուցողները» հիմա Անիին կը քանդէք: Յետոյ ձեռքով ցոյց կու տայ Մայր տաճարի ճիշդ դիմացը, խարկով գիւղի մօտիկ, Դ. Կարուժեանի բաւերով «նման վերջի մը յանդի» բացուած քարահանք մը, ուրկէ, ըստ մեր իմացածին, Երեւանի նորակառուց Մայր տաճարին եւ վստահարար շատ ու շատ սեփական տուններու համար քար կը տանին: Նախ կը պայթեցնեն, ապա փոշի, աղմուկ, ցնցում:

### ԲԱԳՐԵՎԱՆԴ

Ինչե՛ր պիտի տային քիւրտերը մեզի թէ՛ աւերակ վանքի մը յատակագրի փոխարէն, մեզի հետ ունենալինք գիւղին քարտէսը, եւ քարտէսը այն տան, ուր, ըսենք, 2 մեթր խորութեամբ

## MESROBIAN TECHNICAL COLLEGE

1982

THE PIONEER IN TECHNICAL EDUCATION

**HONORABLE RESULTS IN THE OFFICIAL EXAMS 2000**

✓ KINDERGARTEN ( JARDINIÈRE ) 100%    COMMERCIAL SCIENCE 75%

Morning, Afternoon & Night Classes

English & French Section

Technical Baccalaureate B.T.

Sales & Commercial Relations Architecture Drawings	Kindergarten (Jardinière) Interior Design
---	--

Private Specializations (Officially Recognized)

- Computer Courses
- Wax Modeling
- Foreign Languages
- Make - Up
- Business Studies
- Hair Styling
- Travel & Tourism "Ticketing"
- Computer Repair "Hardware"
- Jewellery Design
- TV & Video Repair
- Diamond Setting
- Car Electricity

New

1- Cambridge University Certificate    2- Private Classes    3- Incredible Payment Facilities

Arax Street, Bourj Hammoud Tel: 01 260 504 - 254 938/9 Fax: 01 262 955  
Email: mesrobca@dm.net.lb    Web Site: www.mesrobian.com  
N.B. Parking Assured

# գրականություն եւ մշակույթ

## ԼՈՒՍԱՆԿԱՐԶԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ ՀԱԼԵՊԻ ՄԵՉ



Տուգահանդեսին որմագը

Բարձր հովանավորությամբ Սուրբոյ վարչապետ դուկու Մուհամեդ Մուսթաֆա Միրոյանի, կազմակերպության «Լը Փոն» ցուցասրահի տնօրինության եւ Համալսարանի կազմակերպության Հայկազնի համալսարանի կողմից, 17 Սեպտեմբերի երեկոյան ժամը 7:30ին տեղի ունեցաւ «Հալեպի 2000» յուսանկարչական չորրորդ միջազգային ցուցահանդէսի բացումը, ժէ դարին մնացած պատմական Շիպինիի դարձվածքին մէջ:

Ոչ միայն Սուրբոյ, այլ նաեւ առհասարակ Միջին Արեւելքի համար մշակութային երեւոյթ հանդիսացող այս ցուցահանդէսին բացումը կատարեց Սուրբոյ մշակույթի նախարար տոքթ. Մահաբուհ Բազման հանդիսութեան ներկայ էին երեսունէ աւելի դեսպաններ եւ հիւպատոսներ (առաւելարար մասնակցող երկիրներէն), սուրիացի բարձրաստիճան բազմաթիւ անձնաւորութիւններ, մամուլ եւ մշակութային կազմակերպութիւններու ներկայացուցիչներ եւ արուեստասէրներու մեծ թիւ մը: Ցուցահանդէսին կը մասնակցէին Հետեւեայ երկիրներուն ներկայացուցիչները: Միացեալ Նահանգներ, Լեհաստան, Թուրքիա, Իրան, Իրանստան, Իտալիա, Լիբանան, Հայաստան, Հունաստան, Շուէտ, Սլովակիա, Գերմանիա, Ֆրանսա, Աւստրիա, Սուրիա եւ Միջագային կարմիր խաչը:

Մասնակցող երկիրներուն անունները մեզի արդէն իսկ որոշ պաշտօնաւորներ կը տան ցուցահանդէսի տարուցութեան եւ որակին մասին:

Սուրբոյ մասնակցութիւնը համեմատարար ճոխ էր եւ ուշագրաւ: Խուճը մը արուեստագէտ յուսանկարիչներու կողմէն, Սուրբոյ կը ներկայացնէին երեք տիրական դժբեր առանձին անհատական ցուցահանդէսներով: Անոնք էին՝ Անուար Ատուլ, Պետրոս Թեմիզեան, Թուրքիա Արապեան, Հանիմ Թամարի, Մուհիթ

նաղիրն ու ընդհանուր կազմակերպիչն է նաեւ սոյն մշակութային միջազգային տնօրինողը: Ան ցարդ մասնակցած է շարք մը անհատական եւ խմբային ցուցահանդէսներու: Սուրբոյ եւ Լիբանանի մէջ: Ան իրրեւ տնօրինող ղեկավարած է արարական եւ երուսական հեղինակական հանդէսները 1995ին Հայկազնի, իսկ 1996ին՝ Ամմանի մէջ: Անոր ամենէն յայտնի յուսանկարչական շարքը կը կոչուի «Սուրբիական կեանքը» եւ իսրայէլի Սուրբոյ մէջ: Այս պրպտող մտքի տէր եւ իւրաքանչեւ դիտանկիւն ունեցող արուեստագէտ յուսանկարիչը այժմ իրրեւ յուսանկարչական ուսումնասիրութիւններ պատրաստող կ'աշխատի Եւրոպայի սուրիական Առեւտրի կեդրոնին մէջ:

Բ. - ՄԱՌԵՏ ԱԼՊԷՅՆ. - Ծնած է 1965ին: Մասնագիտութեամբ ճարտարա-



«... Կեւ գլխեր»  
լուսանկարը՝ Իսա Թունայի

պետ է, կը գրադի նաեւ յուսանկարչութեամբ: Մասնակցած է շարք մը խմբային ցուցահանդէսներու Հայկազնի մէջ: Այս մէկը իր առաջին անհատական ցուցահանդէսն է: Ան կը ներկայացնէ «Վերաբնակեցման ծրագիրը» եւ «Հալեպի մէջ»: Անոր հետաքրքրութեան սահմաններուն մէջ կ'իջնան առաւելարար հին Հայկազնի կենցաղն ու բարբերը:

Գ. - ՔԱՐԼՈՍ ԽՈՍԷ ՊՈՒՐՏԵԱՆ. - Ծնած է 1971ին, վենեսուելայ: 1998ին Հետեւած է «Լը Փոն» ցուցասրահի կազմակերպած յուսանկարչական դասընթացներուն: Ան ցարդ մասնակցած է Հայկազնի երկրորդ (1998) եւ Պէյրուսի (2000) միջազգային ցուցահանդէսներուն: Այս մէկը իր առաջին անհատական ցուցահանդէսն է, ուր կը ցուցադրուին «Մարդը եւ բնութիւնը» շարքին գեղարվեստական գործերը:

Ի դէպ, այս միջազգային յուսանկարչական յանդիպումը ցուցահանդէսը դրուած է «Մարդը եւ բնութիւնը» ընդհանուր խորագրի տակ: Թեմայի թէ ստեղծագործական առումներով առաւել հետաքրքրական են Չ. Չ. Քափորի (Աւստրիա), Լարրի Թաուրի (Ֆրանսա), Քրիստաֆոր Պուրտուալի (Ֆրանսա), Լուիզ Զերի (Իրանստան), Սուրբի կուլթիւրի (Սլովակիա) եւ Փելի Քրոնեսթեթի (Շուէտ) գործերը: Կային նաեւ յուսանկարներ, որոնք Արեւելքը կը ներկայացրնէին, ինչպէս՝ Մակո Մահմուտի (Իրան), Հիւսէյն Իսմայիլ Մուտարրի (Սուրիա), Փետր Մորթիլան (Գերմանիա) եւ այլն:

Այս յուսանկարչական տնօրինողը համարարական մշակութային առումով իսկ կենսական ձեռնարկ մըն է, որ արժանի է բոլոր տեսակի արվակցութեան եւ քաջաբերանքի:

## ՄԵԾԵՐԻ ԱՐՈՒԵՍԸ ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔ Է

Երուանդ Քոչար եւ Սերգէյ Փարաչանով՝ երկու հսկայ արուեստագետներ, որոնք իրենց ինքնատիպ ու բարձրարուեստ ստեղծագործութիւններով արժանի են միջազգային համբաւի ու ճանաչման: Ստորեւ տրուած ակնարկը մէկ կողմէ կու տայ համեմատական անոնց արուեստներուն եւ միւս կողմէ կը խոսի այս երկու մեծութիւններուն անձնակազմի ծանօթութեան մասին:

Նրանց ծննդեան թուերի միջեւ տարբերութիւնը 25 է: Տարիների այդքան մեծ տարբերութեամբ ծնւածները սովորաբար տարբեր սերունդների են պատկանում: Բայց թուերը փոքրամաշով՝ ջնջուում-անհետանում են յատկապէս մեծ անհատների տաղանդի անդիմադրելի ուժի առաջ. եւ ժամանակների մէջ նրանք ներկայանում են որպէս սերնդակիցներ: Նրուանդ Քոչարը եւ Սերգէյ Փարաչանովը ծնունդ են նոյն քաղաքում՝ Թիֆլիսում. 25 տարուան տարբերութեամբ: Նրանցից իւրաքանչիւրն իր ընտրած ասպարէզում նորարար էր եւ իր արուեստով ընդունում ասիմիլանտը ձեւախախտելու յանդգնութիւն ունեցաւ: Այսպէս թեմադրիչի ծննդեան տնիւրն «Քոչար» արդէն Եւրոպայում էր եւ Փարիզում կազմակերպուած «Ժամանակակից արուեստ» միջազգային ցուցահանդէսում իր գործերը ներկայացրել էր այնպիսի արուեստագետների հետ. ինչպիսիք էին Արփը, Միրոն, Տելուր, Փիքստոն եւ ուրիշներ: Այդ շրջանի նրա աշխատանքները ֆրանսացի անուանի արուեստագետներից մէկը «Քոչարի» ծնունդ փառքի անխնայաբար կոչեց: Դա սկիզբն էր: Յետոյ արդէն իրարամերձ կարծիքների տեղիք տուած նրա ստեղծագործութիւնները տեսական ուսումնասիրութիւնների հիմ դարձան: Նրանց սակաւ մասնաւորում յոյս տեսած յոյուածների հեղինակները գրում էին. «Քոչարը մէկընդմիջում վճռել է գրգռել հասարակական կարծիքը եւ երբեք չի հրաժարի դրանից»: «Լայն հասարակայնութիւնը, որը դեռեւս կրթուած չէ, նրա մտաւոր եւ մանրամասն փիլիսոփայական սկզբունքներով ստեղծուած գեղարվեստութիւնը տանջալի կը համարի, այն շատերի համար նոյնիսկ անհասկանալի կը մնայ»:

Տարիներ անց մտատարապէս նոյն արժեքներում գնահատուեցին նաեւ Սերգէյ Փարաչանովի ֆիլմերը: Նոր մէջբերումներից խուսափելով իշխեց միայն՝ էլի Փարիզն էր. որ յատուկ վերաբերմունք ցուցաբերեց փարաչանովեան շարժանկարի հանդէպ: Առհասարակ, սա այն քաղաքն է, որը երկու արուեստագետների կենսագրութեան համար ընդհանրակալի. գուցէ նաեւ անկատարական դեր ունեցաւ: Հետաքրքրական է եւ այն, որ Քոչարը Եւրոպայ. ուրեմն եւ Փարիզ մեկնելու հարաւորութիւն ունեցաւ խորհրդային իշխանութեան հաստատման. իսկ Փարաչանովը՝ նոյն կարգերի փլուզման անխորհրդի:

Նրուանդ Քոչարը հայրենիք վերադարձաւ 1936ին: Եկաւ Փարիզում թողնելով կնոջը՝ Մելիսէին եւ ստեղծագործութիւնների հաւաքածուն: Զգաւոր, որ ետդարձի ճանապարհը փակուելու է ընդմիջու: Եւ որ նոյնիսկ կնոջ հետ անամական կապի հնարաւորութիւնից է զրկուելու: Մելիսէին գրած որոշ անհանգիստ ատուում էր. իսկ իր պատասխանները մնում էին Պ.Ա.Կի դարակներում: Հանդիպման վերջին յոյսը Փարիզում ցուցահանդէս բացելու էր. որի կազմակերպման համար Մելիսէին ջանք չխնայեց: Այն բացուեց 1966ին. «Փերսիլ» պատկերասրահում:

«Քոչարը գորակոչի է ենթարկուած թոչոչ ձեւերի մի աշխարհ՝ շոշափուկաւոր քաղաքների տեսարաններ, ովկիանոսներ եւ լեռնահովիտներ, դաշտեր եւ ապառաժներ, Ադամ եւ Եւա, կենսոլորտներ, համաստեղութիւնների, կենդանական կերպերի ճշմաներ: Նրանց Պախեան համանուագը տիեզերքի մի նոր պատկեր է», գրել է յայտնի արուեստաբան ժողովակալտեմարը՝ ցուցահանդէսի առիթով հրատարակած իր ուսումնասիրութիւնում: Նա իր ծաւալուն աշխատութիւնը ջերմ մակագրութեամբ նուիրել է Մելիսէին: Քոչարին, որը մեծ յոյս ունէր. թէ այդ ցուցահանդէսը վերջապէս հանդիպման առիթ կը դառնայ: Քոչարին գրած իր մի քանի անամականներում կիցն այդ յոյսն էր փայլաւորում:

«Իմ սիրելի երրուանդ, «Չնայած քեզանցից վաղորդ յուր չունեմ, սակայն մտքով ու հոգով քեզ հետ եմ: Մեծ հաճութիւնով ողորկում եմ քեզ Քոչար Այանտի եւ վայտեմար ժողովականները: Հաւատայ, որ մեր երազանքը՝ տեսնել քեզ ու քո աշխատանքների ցուցահանդէսը Փարիզում, կ'իրականանայ»:

«Շատ եմ յուզուում անակը գրելիս եւ ցանկանում եմ, որ այն քեզ հասնի որքան հեարարոր է շուտ: Կարծում եմ՝ անակը կը գտնի քեզ ողջ եւ առողջ, կը բերի ուրախութիւն, յոյս եւ վստահութիւն: Ամուր սեղմում եմ քեզ կրծքիս»:

Մելիսէին: Ականատեսների վկայութեամբ. ցուցահանդէսի բացման օրը Մելիսէին հայեցքն անընդհատ դրանք եւ պահում: Սպասում էր: Բայց հրաշքը տեղի չունեցաւ: Փարիզ մեկնելու եւ իր անհատական ցուցահանդէսի բացմանը ներկայ լինելու Քոչարի խնդրանքը մերժուել էր: Մելիսէին չգիտէր ու չիմացաւ էլ. թէ մնացածի դիմում է մերժուել: Ամուսնու լուրսեան պատճառին անհիմն, անորոշութեան ու յուսահատեցնող տառապանքի շնորհիւ մնացած ընդհատուածի է գործում:

Արուեստագետի յանդգնութիւնը պատժուում է: Մահաւանդ՝ երբ անատեղի է եւ ընդհանուր բացատրութեանը չի ենթարկուում: Գաղտնիքը չհասկանալու անկարողութիւնից ծնունդ է ոգին կաշկանդելու չարու-

թիւնը: Թէեւ փոքր մարդիկ իրենց այս վարքը ուրիշ պատճառաբանութիւններով են արդարացնում:

1937 թուականին «Խորհրդային Հայաստան» թերթում տպագրուած «Գեղարուեստի ճակատից դուրս շարքը ժողովրդի թշնամուն» յօդուածում Քոչարը մեղադրուում է «Հակայեղափոխական բարոյութիւն կազմակերպելու եւ հակայեղափոխական գործունէութեան համար»: Սերգէյ Փարաչանովին «գեղարուեստի ճակատից» դուրս մղեցին նախ՝ ֆիլմ նկարահանելու հնարաւորութիւն չտալով. ապա բանու մտելով ու կտտանքների ենթարկելով: Եւ եթէ Լիլի Պրիկը՝ Մալաբուրու ընկերութիւն չբարեխօսեր, եւ նրա քրոջ ամուսինը՝ Լուի Արակոնը չիմէր խորհրդային երկրին ղեկավար Լեոնիդ Պրեժնեյին. Փարաչանովին չէին ազատի: Եթէ այդ խնդրանքը մերժուել կամ թէկուզ մի քանի օրով ուշանար. ապա բեմադրիչի ողբերգական վախճանն անխուսափելի կը լինէր: «Տասնհինգ տարիներ իմ հնկատմամբ ցուցաբերուած վերաբերմունքը ոչ ոք, ոչ մի սերունդ չի մերթ». մեր հարցազրոյցում ասաց Փարաչանովը:

Հարարոր էր. որ Քոչարի՝ մեր երկրի ու նաեւ «Հայֆիլմ» խորհրդայինը դարձած «Մասունցի Գալիթ» արձանից բացի ունենալիք ազգային վիպասքի նաեւ փարաչանովեան տարբերակը: Փարաչանովը համոզուած էր. որ «Անհրաժեշտ է վերստին հաղորդակցուել մեր աշխարհընկալման ակունքներից, համակուել կեանքի այն լաւատեսական ընկալումով, որով տոգորուած է մեր «Մասունցի Գալիթ» սեծարժէք դիւցազնավէպը»: Արդե՞ք նա իր մտորումներից հաղորդակից է դարձրել Քոչարին: Ինչպէս այս. այնպէս էլ այն հարցերը. թէ երբ է կայացել երկու արուեստագետների առաջին հանդիպումը. կարծես թէ ստույգ պատասխան չունի: Նրանց մի հանդիպման պատմութիւնը՝ Քոչարի հարապատեցումի յուրեքի հիման վրայ. գրաւել է քանդակագործի հարցը՝ Լայա Մարտիրոսեան - Քոչարը: Նրա շնորհիւ է նաեւ, որ վերջին դրժար տարիներից Քոչարի տուն-թանգարանը մայրաքաղաքի մշակութային կենտրոն կենտրոնում է մնացել: Թանգարանի տնօրէնն իր գործի նուիրեալն է եւ պատեղ գտնուող հիւրերը խնամքով պահելով հանդերձ. եօթ փականի տակ չի դնում: Այլ հարկ եղած դէպքում ինքն է պատրաստակամօրէն տրամադրում: Նրա առաջարկած թղթապանակներից մէկի վրայ գրուած է՝ Փարաչանով: Պարուսակութիւնն այնքան էլ մեծ չէ՝ Փարաչանովի հեղինակած մի քանի գծանկար, մէկ քույր եւ մէկ համացանկ: Մակագրութիւնների թուագրութիւն ենթադրում է. որ Քոչարն ու Փարաչանովը. եթէ անգամ անխկնդում ծանօթ են եղել, յանձնակի սկսել են հանդիպել 1967-ից յետոյ: Մարտիրոսեան - Քոչարի գրաւումը նոյնպէս ժամկետ չի իշխատակում: Իսկ պատմութիւնը հետեւեալն է. «Մի երեկոյ հնչեց դրան գանգը: Փարաչանովն էր: Քոչարն ընդառաջ գնալով՝ ողջազորութեց նրա հետ: Փարաչանովի տարբերակի մտաւոր, ողջոյնի խօսքերի յորդանքը տուր միանգամայն լցրին աշխուժութեամբ եւ ուրախութեամբ: Արթիւքի շարժումով նուէր բերած գործը գեների փոքեց եւ օրհնանքի խօսքեր սրմնաց, ապա տանտիրոջը յանձնեց խսիրէ մաշիկներ ու նրա սիրած բրուրմանաւտ ծխախոտը, որն առանձնապէս գոհունակութիւն պատճառեց վարպետին»:

Դառնանք թղթապանակի հիւրերին: 1967-ին մայրաքաղաքի նկարչի տանը բացուել էր Հայաստանի ժողովրդական նկարիչ խաչատուր Եսայանցի ցուցահանդէսը. եւ այդ առիթով հրատարակուած համացանկի առաջաբանը գրել էր Փարաչանովը: Մի էջի վրայ արձակ բանաստեղծութիւն է. ձօճ՝ գեղանկարչի աշխատանքներից:

Համացանկի չորրորդ էջով մէկ մեծ տառերով շաղտուած բառեր են՝ բացականչական ճշմաներով. «Ժամանակակիցն, հանձարին, վարպետին, տղամարդուն (միակից՝ արուեստում)՝ Քոչարին»: Անկիւնում իր ինքնադիմանկարն է: «Քոչարը մակագրուած է. «Ժամակազին, մեծագոյն որոնեանսին, սիրելի մայկաքոթ - վարպետին»: Ահա մի փոքրամաշով գծանկար. երեք տղամարդ. որոնցից մէկը հոգեւորական է: Կանգնած են Արարատի խորապատկերին: Լեռը փշալարերով է պատուած: Մեծ Մասիսի վրայ կիսաբոլոր երկգլխանի օձ է պատկերուած: Հակառակ կողմում մակագրուած է. «Ժամակազին Երուանդին» հանձարին»: Մէկ այլ պայմից պոկուած թերթիկի վրայ կրկին Փարաչանովի ինքնադիմանկարն է. ներքեւի անկիւնում ուստերն է վրացերէն գրուած է՝ «Չառիկ». 1978 թուական:

Պետք է ենթադրել. որ 1967 - 1978 թուերին Գրանց հանդիպումները հիմնականում Երեւանում են եղել: Եւ այդ՝ մէկ տասնամեակից անլի տարիքների ընթացքում Փարաչանովի ակնածանքն ու հիացմունքը Քոչարի հանդէպ մնացել են անփոփոխ:

Կոստան Զարեանի խօսքն է՝ «Մեծերի արուեստը խոստովանանք է»: Թերեւս ժամանակի ուրիշ մի հատուածում արարելու դէպքում երկու արուեստագետների միմեանց արժեքները եւ գնահատելու խոստովանանքը մէկ այլ եղանակով արտայայտուել: Հարարոր է. որ արձանագործի հանդէպ իր հիացմունքն ու յարգանքը բեմադրիչը ոչ միայն մակագրութիւններով, այլ ինչ ֆիլմ նկարահանելու հաւաստիք: Քոչարի «մոգականութեան կնիքը» կողմ գործերին նուիրուած Փարաչանովի ֆիլմը հաստատապէս մոգական ուժ կ'ունենար:

ՌՈՒԶԱՆ ԶԱՔԱՐԵԱՆ

«Հայացք Երեւանից» Թի 6 - Յունիս 2000



«Յալիտեկական գեղեցկուրիւն»  
լուսանկարը՝ Զարլոս Խոսէ Պուրճեանի

Սիպահյան, Արթի Քամուռ, Նատիւ Աատո, Եսայան Ժատուր եւ Շատի Պաթար: Իսկ անհատական ցուցահանդէսներու հեղինակները կը ներկայացնենք առանձին:

Ա. - ԻՍԱՒ ԹՈՒՄԱՆ. - Մասնագէտ արուեստագէտ-յուսանկարիչ, տէրն ու տնօրէնը «Լը Փոն» ցուցասրահին, որ հիմ-

**ԾԱՆՈՒՑՈՒՆԵՐՈՒ ՌԵՇԱԳՐՈՒԹԵԱՆ**

«Ազգայն» մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէ կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթացիկ գիրով (հաստատութեանց պարագային՝ նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) ներկայացնել «Ազգայն» ծանուցումներու գրասենեակը:

### ՅԵՂԱՅԻՆ ՊԱՏԿԱՆԵԼԻՈՒԹԵԱՆ ԵՒ ԽՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԴՅԵՐ

Ողիմպիական խաղերը կամ միջազգային լուսարձակներ գրառող նման այլ իրադարձություններ յաճախ կ'օգտագործուեն քարոզչական նպատակներով: Այս օրերուն Աստորալիոյ պետութիւնը կը փորձէ «բարելաւել» երկրին մէջ մինչեւ այսօր ճնշուած եւ իրաւագրկուած բնիկներուն պատկերը: Սիտնիի Ողիմպիականին բացման հանդիսութեան մէջ բնիկները ներկայ էին իբրեւ Աստորալիոյ ազգային խորհրդանիշը: Ողիմպիականի շահը վառող մարզիկը բնիկ աստորալիացի վազքի ատլետն էր, Ողիմպիականի գարդապատկերին մաս կը կազմէր բնիկ աստորալիացիներու անհնդական պուճըրանը: Պետութիւնը կը փորձէր ցոյց տալ, թէ խորական մօտեցում չունէր երկրին հազարաւոր տարուան բնիկներուն նկատմամբ եւ կը յարգէր անոնց ազգային ժառանգութիւնը: Սակայն Աստորալիոյ բնիկներուն մեծամասնութիւնը կ'ապրի աղքատիկ թաղամասերու մէջ եւ զրկուած է սպիտակամորթ եկուորներուն յատուկ անելի բարօր կեանքի հեռանկարէն: Աւելին. քանի մը տարիէ ի վեր բնիկները պետութեան կը պահանջեն, որ իբրեւ ցեղասպանական արարք ճանչնայ 1920ական տարիներուն իրենց զուարկներուն բռնի բաժանումը իրենց ընտանիքներէն: Անոնք նոյնիսկ սպառնացած էին խանգարել Սիտնիի Ողիմպիական խաղերը, իբրեւ բողոք՝ ընդդէմ Աստորալիոյ բնիկներուն հարցերով զբաղող նախարարութեան այն յայտարարութեան, թէ սեւամորթ բնիկներուն զուարկներուն միայն 10 առ հարիւրը խլուած էր իր ընտանիքներէն՝ իբրեւ սպիտակամորթ դաստիարակուելու համար, եւ թէ այս համեմատութիւնը անբողջ սերունդ մը չի ներկայացներ: 1997ին մարդկային իրաւանց հարցերու պաշտպան մը՝ Սըր Ռանդոլֆ Ուիլսոնը հրապարակած էր «Տուկ բեքթը գաւուր» վերնագիրով տեղեկագիր մը, որուն մէջ «զոդուած սերունդ» կը կոչէր արմատախլուած մանուկները: Ան Աստորալիոյ պետութիւնը անբաստանած էր ցեղասպանութեամբ եւ ձուլումի քաղաքականութեամբ, անձրամասնօրէն նկարագրելով բնիկներու զուարկներուն կրած ֆիզիքական եւ հոգեկան տառապանքները: Մինչեւ այսօր բնիկները կը պահանջեն, որ պետութիւնը պաշտօնապէս ներդրութիւն խնդրէ անցեալին կատարուած այս անմարդկային արարքին համար, սակայն քաղաքական պատասխանատուներ կը փորձեն նսեմացնել եղելութիւնը եւ կը մերժեն ընդառաջել:

**Զուգի սիւնակներով կու տանք** «Ինթըրնէշնըլ Էքսպրէս» թրիբյունալէն» օրաթերթին մէջ լոյս տեսած Մայքըլ Ռիչըրտսընի յօդուածը, որ կը նկարագրէ աստորալիացի բնիկի մը կտրած ճանապարհը՝ իր արմատախլումէն մինչեւ իր համաքականութեան շահերուն ու պաշտպանութիւնը:

Ճոն Քուլտերերի Մորիարթի 4 տարեկան էր եւ ուրախ կ'ապրէր Աստորալիոյ բնիկ հնդիկներու հաւաքականութեան մը մէջ, Հիւսիսային Աստորալիոյ տարածքին, երբ 1942ին խլուած էր իր ընտանիքէն: Դէպքը պատահած էր առեւտու-ցումի պէս: «Մայքըլ զարթեցի տուն ուղիտի բե-րէր դիւս. բայց հոն չէի»: Զինուորական փո-խադրակառքերու մէջ լեցուած էի ինք. այսպէս ան-բնիկներու էլիւ Սփրինկլի վրայով, կը պատմէ ան: Մորիարթի, որ այժմ ձեւագծող է, մաս կը կազմէ Աստորալիոյ բնիկներու փոքրամասնու-թեան այսպէս կոչուած «ցոյցուած սերունդին»: 1910էն 1970ական տարիներուն շուրջ 100 հազար բնիկ աստորալիացի մանուկներ, շատերը՝ Մո-րիարթիի պէս բնիկ աստորալիացի եւ եւրոպացի խառն ծնունդներ, պետական եւ դաշնակցային սրէնքներու հիմամբ խլուած են իրենց ծնողնե-րէն այն պատճառաբանութեամբ, թէ բնիկ աստորալիացիները կորստեան դատապարտու-ած ցեղ մըն էին, իսկ անոնց զաւակները փրկե-լու համար պանդա արեւմտեցիք ընտանիքներ ունէ մէջ մեծցնէր եւ արեւմտեան կրթութեանը դաստիարակէր մարդասիրական արարք մըն էր: Սակայն Աստորալիոյ բնիկները այդպէս չեն

անարդար է աստորալիացիներու ներկայսերուն-դէն պահանջել, որ ներտնտեսական խնդիրները չգործած վատ արարքներուն համար: Ան կ'ըսէ, թէ անելի կարեւոր է դէպի առջեւ նայիլ, քան՝ դէպի ետ: Այս կեցուածքը գալորյթ կը պատճառէ բազ-մաթիւ բնիկներու: Կարգ մը բնիկներու դե-կալարներ խօսած են Ողիմպիական խաղերուն ընթացքին ցոյցեր կազմակերպելու մասին՝ ուշադ-րութիւն հրահրելու համար իրենց դատին վրայ: Մորիարթի իր ընտանիքին բաժնունել է 10 տա-րի ետք միայն յաջողած է նամակով կապ հաս-տատել իր մօր հետ: Մինչ այդ անոր իրականացի-հայր լքած էր իր կիներն եւ մահացած էր: Մայքըլ ու գաւառի ի վերջու վերստին հանդիպած են իրարու էլիւ Սփրինկլի մէջ, երբ Մորիարթի 15 տարե-կան էր: Ան քրիստոնէական հիմնարկներու եւ պետական վարժարաններու մէջ ուսում ստա-ցած էր իրրեւ պետութեան խնամակալութեան ներթակայ մանուկ մը: «Օրս հետ այդ հանդիպումը օգնեց ամ-բողջացնելու իմանկարը: Անիկա այն կտորն էր, որուն ուլետը ուներ ամբողջական զգալու համար իբրեւ անհատ եւ յառաջ երթալու: Կեան-

մտածքը: Ենեց, դաւա-դիր եւ ամբարտաւան քաղաքականութիւն մըն էր, որ համազօր էր մշա-կութային ցեղատարա-բեան: Հիբերիոյ ուղեգի-ծին կրկնութիւնն էր, անոր գաղափարներուն կրկնութիւնը, որոնք գարշելի կը նկատուէին այսօր», դրած է Մորիար-թի իր ինքնակենսագրու-թեան՝ «Սոլթուորթը Կե-լա» մէջ, որ յայտնած է այս տարի:

Աստորալիոյ տարած-քին 1997ին կատարուած պետական ուսումնասի-րութիւն մը ցոյց տուած է, թէ կողմնակա սերուն-դի մտնուելներ վատ վե-րաբերումի արժանացած են եւ հոգեբանական եր-կարատեւ տագնապներ պարծեց են իրենց ընտա-նիքն ու մշակութային կապերը կորսնցնելու պատճառով: Ուսումնա-սիրութեան արդիւնքին համաձայն, այսօր ապրող 388 հազար բնիկ աստոր-րալիացիներէն գրեթէ իւ-րաքանչիւրը այս բաժա-նումներուն ժխտական անդրադարձը կրած է:

Աստորալիոյ պետու-թիւնը կը մերժէ պաշտօ-նապէս ներտնտեսական խնդիրներու դէմ անցեալին կատարուած արարքներուն համար, որոնց շարքին՝ մանուկ-ներու բռնի բաժանումը իրենց ընտանիքներէն: Վրոն Էտուրտ կը վիճի, թէ

քի մէջ շատ անելի ուշ անդրադարձայ, որ ինքնութեան գուրկ ըլլալու պատ-ճառով կը տառապէիս ինձի նման հա-սակ նետած բազմաթիւ բնիկ աստու-րալիացիներ: Անոնք չէին ճանչնար իրենց բուն ընտանիքը եւ գաղափար չունէին իրենց ցեղատարալի կապե-րուն մասին: Ոմանք բարեցուցիչի մո-լի դարձած են, ուրիշներ կանխահաս մահով հետացած են այս աշխարհէն: Թերեւս քիչ մը պարզամտութիւն բու-լի ասիկա, սակայն երբեմն կը մտածեմ. թէ արդեօք անոնք նման դժուարու-թիւններու մատուցեցան, որովհետեւ չէին կրնար գտնել իրենց ներքին խա-ղաղութիւնը, որ իրենց պիտի օգնէր հալարտ զգալու իրենց բնիկ աւըս-տրալիական ժառանգութեամբ», կը գրէ Մորիարթի:

Մորիարթիի համար յառաջ երթալ կը նշանա-կէր մեծամասնութեան սպիտակամորթներէն յարկացած ընկերութեան կողմէ ընդունուելու ճամբայ մը գտնել՝ վճարովի աշխատանք ճարե-լով եւ գատորոշուելով նախ մարմնամարզի, ապա՝ կրթութեան մէջ: «Մարդալիոյ դերու «խեց» երկրի մը մէջ նկատեցի, որ երբ քիչ մը ճանաչում գտնես, կ'ընդունուիս ամէն տեսակ մարդի մէջ. նոյնիսկ ընկերութիւններ ներգրա-ւելու առիթ կ'ունենաս, կը գրէ ան: Մորիարթի սկիզբը իրրեւ մեքենագործ գաղափար է Աստ-րիայի մէջ երկտրակայանի մէջ, ֆուտբոլի խաղ-ցած է հարաւային Աստորալիոյ նահանգին խում-րէն, ընտրուած է իրրեւ ազգային խումբի մար-զիկ եւ առաջին բնիկ աստորալիացիներէն էր, որ աւարտած է համալսարան մը:

Մորիարթի այլ բնիկներու եւ անոնց դատին պաշտպան ոչ բնիկներու հետ նաեւ պայքարած է Սիտնիի մէջ ցեղային խտրականութեան վերջ տալու, շինել ծրագիրներ մշակելու, բնիկ աստու-րալիացիներու ընկերային բարօրութիւնը բա-րելու, ընտրուելու եւ գանդեք անելի արդիւնաւէտ կր-թութեան ու պատրաստութեան ճամբով երկրին աշխատող ուժին միացնելու համար: Ան կը խոս-տովանի իր յուսաբերութիւնը ի տես արդիւն-քին. «Կը կարծեմ, որ բարի կամեցողութիւնը կը իսխոյի երկու կողմերուն մօտ: Տուրքերէ գոյացած մեծ գումարներ ծախսուած են բնիկ-ներուն օգնելու ծառայող ծրագիրներու հա-մար, որոնք գլխաւորուած են նոյնիսկ բնիկ-ներու կողմէ, սակայն շատ մ'ուրում կայ», կ'ըսէ Մորիարթի: Աստորալիոյ բնիկները կը կազմեն երկրին 19 միլիոն բնակչութեան 2,1 առ հարիւ-րը: Անոնք կը մնան աստորալիական ընկերու-թեան ամենէն իրաւագրկուած հաւաքականու-թիւնը առողջապահութեան, կենսաբան տեղողու-թեան, կրթութեան, բնակարանային ապահովու-թեան եւ գործի հեռանկարներու տեսակէտէն:

«Սոլթուորթը Կե-լա» ինքնակենսագրու-թիւնը արդէն վերահրատարակուած է 4 անգամ: Մորիարթի կ'ըսէ, թէ գայն գրած է յուսալով, որ աստորալիացիք, ինչպէս նաեւ ստարներ կար-դան իր եւ իր ցեղակիցներուն փորձառութեան մասին: Աստորալիա մեծ երկրի մըն է եւ մեծ ապագայ կը խոստանայ: Սակայն անոր ցեղա-լիին յարաբերութիւններու պատմութիւնը լաւ չէ: Անիկա պետք է ընդունի իբրեւ հիմք մեր ապագայ գործակցութեան բազմամշակոյթ բն-կերաբեան անելի լաւ ձեւ մը ստեղծելու հա-մար», կը բացատրէ ան: Մորիարթի այս տարի արժանացաւ Աստորա-



Մորիարթի ընտանիքը

լիոյ Կարգի շքանշանին, որ երկրին մեծագոյն պատուոյ շքանշանն է: Ան նաեւ կը յուսայ, որ իր գիրքը իրրեւ օրինակ ծառայէ իրաւագրկու-ած բնիկներու եւ ցոյց տայ, թէ կարելի է յաջո-ղիլ ժրջան աշխատանքի եւ կամքի միջոցով՝ միաժամանակ կառչելով ազգային ինքնութեան եւ մշակոյթին:

Մորիարթի կը գլխաւորէ Աստորալիոյ Բնիկ-ներու Մարզական Ազգային Միութիւնը եւ փոխ նախագահ է կազմակերպութեան մը, որ դրա-մագլուխ կը հայթայթէ գործի ձեռնարկող բնիկ-ներու: Ան կը փափաքի, որ անելի մեծ թիւով բնիկներ պատասխանատու դերեր ստանան են գործառնութիւններու, մասնագիտութիւննե-րու, կրթութեան եւ քաղաքականութեան մէջ: Աստորալիոյ խորհրդարանին մէջ բնիկները միայն մէկ ներկայացուցիչ ունին:

Քէլթի Ֆրիմէն՝ Սիտնիի Ողիմպիականին ջա-հը վառող մարզիկը կ'ըսէ, թէ Մորիարթի այն անձերէն մէկն է, որ կը դիմէ ճանաչելու գիտնալու համար Աստորալիոյ բնիկներուն կտրած հա-նուպանքին մասին:

Մորիարթի 1983ին արուեստանոց մը հաստա-տած է Աստրիլյոյ մէջ, իր սպիտակամորթ աստու-րալիացի կնոջ հետ, Աստորալիոյ բնիկներուն արուեստի ժառանգութիւնը տարածելու համար ժամանակակից գծանկարներով:

Անոր ամենէն անելի ճանչցուած գծանկարը կը գորդարէ «Քուրաու Էրլայն»-ի պատկանող «Պոլիսի 747» երէն մէկը, որ կանոնաւոր թռիչք-ներ կը կատարէ դէպի Միացեալ Նահանգներ եւ Եւրոպա: Անիկա կը կոչուի «Ուաւալա Տրիմիսիլ Փլէյն»: Ուաւալա ազեկաց կը նշանակէ բնիկ-ներու եանեւուլա ցեղախումբին լեզուով:

Մորիարթի իրագործած նկարը կը պատկե-րէ «ազեկացի ոգիով ժողովուրդին» տեղաշար-ժը Աստորալիոյ տարածքին, երբ երկրի նոր կը կազմուէր միլիոնաւոր տարիներ առաջ, Աստու-րալիոյ բնիկներուն «երազի ժամանակին»: Անի-կա ցոյց կու տայ երկրին տարածքին տեղի ոչնե-ցած շարժամներուն հոյովոյթը. մարտմուտի հրավառ գոյներ, կանաչ մարգագետիններ, կար-միր հողի երանգներ «կրթականին» անոր գծանը-կարին մէջ:

«Քիչեր կընան իրապէս հասկնալ Աստորա-լիոյ բնիկներուն մշակոյթին ոգեղեն իմաստը. անոր արտայայտչու մը՝ պատկազ գծումներու մէջ եւ անոր կալը՝ երկրին կազմութեան հետ: Սակայն կը հաւատամ, որ մարդիկ աստիճանա-բար պիտի հասկնան զայն մեր արուեստին ճամ-բով», կը բացատրէ Մորիարթի:

## «ՓՈՔՐԻԿ ՄՐՃԱԳՈՅՆՆԵՐ»

**ՄԻՆՉ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄՊԱՆԱԽՈՍ ՀԱՒԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԵՏՋՀԵՏԷ ՏԻՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆ ԿԸ ԴԱՌԱՆ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՏԱՐԱԾՔԻՆ, ՄՊԱՆԱԽՈՍ ՀԱՆՐԱԾԱՆՈԹ ԴԷՄՔԵՐ ՏԱՐԱԿԱՐԾԻՔ ԵՆ ԶԻՐԵՆՔ ԲՆՈՐՈՇՈՂ ԲԱՌԻՆ ԻՄԱՍՏԻՆ ՇՈՒՐԶ**

Ռաբէլ Ուելչ անոնցմէ մ'էկէ է: Միա-ցեալ Նահանգներու նախկին նախագահ ձորե Պուշ «փոքրիկ սրճագոյն» կը կոչէ իր իրոնիկը: Ոմանք Փերուի նախագահ Ալյուքսէօ Ֆոնսինոյին անուցմէ մ'էկը կը համարեն: Հետեւաբար զարմանալի է Էնթրէնի Քուիլիի շփոքը. «Չեմ գիտեր ի՞նչ կը նշանակէ լատին... վեներուելլա-ցի», արժանաթիւնցի՝ արդեօք իտալացիները մաս չեն կազմեր անոնց», հարց կու տայ ծագումով իրլանդացի-մեքսիկա-ցի իրաւաբանը:

Սակայն, լատին թէ սլավոնախօս, ինչ որ այլ կոչուելի անոնք, կարելի չէ անտե-սել անոնց հետզհետէ տիրական ներկա-լութիւնը նադորդակցութեան միջոցնե-րու եւ տարբեր ճարտարաբանութեան մէջ: Կարելի չէ հաշուել չառնել անոնց ուժը: Միացեալ Նահանգներու մէջ, մա-նուանդ՝ նախագահական ընտրութիւն-ներու ընթացքին:

Սլավոնախօսները կը կազմեն Միացե-ալ Նահանգներու բնակչութեան 10 առ հարիւրը եւ ամէնէն արագ բազմացող հաւաքականութիւնն են: Կը նախատես-ւի, որ մինչեւ 2005 թուականը անոնք զուսնալ երկրին ամէնէն ստուար փոք-րամասնութիւնը՝ գերազանցելով սեւա-մորթները: Մինչեւ 20 տարի 4 ամերի-կացիէն մ'էկը սլավոնախօս պիտի ըլլայ: Աւելին. սլավոնախօս հաւաքականու-թիւնը տարեկան 350 միլիոն տղար կը ծախուէ Միացեալ Նահանգներու մէջ:

Շարք՝ էջ 8

Պատասխան  
Լ. ԿԻՒԼՈՅԵՆ - ՍՐԱՊԵԱՆ

## Ի ՎԵՐՉՈՅ, Ո՞Վ Է ՄՊԻՏԱԿԱՄՈՐԹԸ

**Հարցունք նոյնքան ինձ է, որքան Ամերիկան:** Մինչ երկրին ցեղային պատուարները կը վերանան, պատասխանը կը շարունակէ փոխուիլ, իսկ սպիտակամորթ ըլլալու առաւելութիւնները որեւէ ժամանակ անելի կ'աղօտին. «Սիւզուիք» շարաթաթերթին ամերիկեան հրատարակութեան մէջ լոյս տեսած «Տը Նիւ Ըմբրիք» վերնագիրով յօդուած մը կը վերլուծէ. ստորեւ՝ բաժնիներ.

Ո՞վ սպիտակամորթ է հարցումը նոյնքան հին է, որքան Ամերիկան, իսկ պատասխանը յաճախ փոխուած է եւ դարձեալ կը փոխուի, նոյնիսկ երբ սպիտակամորթ ըլլալու առաւելութիւնները որեւէ ժամանակ անելի անորոշ են ներկայիս: Սկիզբը առաւելութիւնները յատկ էին՝ ամերիկեան ինքնութիւնը անբանկտելիորէն կապուած էր ցեղային պատմութեան, Երկրին քաղաքացիութեան իրաւունքի առաջին սրէնքը, որ վաւերացուած էր 1790ին, սպիտա-կամորթ ստարներուն կը վերապահէր քաղաքա-ցի ըլլալու մենայնուհետ: Միայն Ամերիկայի քաղաքա-ցիական պատերազմէն ետք էր, որ սեւամորթներ իրա-ւունք ստացան քաղաքացիութեան դիմելու: Սակայն նոյնիսկ այդ տան ցեղային կասկածելի պատկանե-լութեանը հաւաքականութիւններ անդրադալի էին: Այսպէս շարունակուեցան մինչեւ 20րդ դար, երբ ազ-գային տարբեր հաւաքականութիւններէ մարդիկ դա-տական ատեաններուն դիմելին փաստելու համար, որ իրենք սպիտակամորթ են: Ի վերջոյ 1952ին վաւերացուած Մքքիլըն-Ուոլթըր յօդուածը ջնջեց քաղաքացիութեան իրաւունքի վերա-բերող ցեղային սահմանափակութիւնները: Արեւելքի հնդիկները, արարները եւ ոչ եւրոպացի այլ ցեղեր այ-րիւս պարտաւոր չէին իրենք գիրենք սպիտակ ներկե-լու, ամերիկացի դառնալու համար:

Այսօր նման փորձ էր տարիներակ պիտի թուէր: Սակայն կ'արժէ յիշել, որ նոյնիսկ եւրոպացիները գերծ չէին իրենց ցեղային պատկանելիութեան իրականու-թիւնը հաստատելու պարտաւորութեան: 20րդ դարու սկիզբի գաղթականութեան հոսքին վերաբերող բանա-

վէճերը մեծ մասամբ հետեւանք էին այն իտեւագիւն, որ ստեղծուած էր Ամերիկայի «ծինական աւագանին» խա-թարումին մտաւախութեանը՝ այդ աւագանը յուսահա-տական կերպով «կ'ապականէր» եւրոպական ստորա-դաս ազգութիւնները: Այդ ժամանակներու գլխաւոր գիտնականներն ու քաղաքագէտները այն մտաւախու-թիւնը ունէին, թէ Արեւելեան եւ Հարաւային Եւրոպա-յէն գաղթականներ, որոնք մտաւորական, բարոյական եւ ֆիզիքական առեւտով ստորադաս կը համարուէին, պիտի ստորնացնէին ամերիկացի գերադաս անկլոսաք-ստն, գերմանական շառափողը: Այս մտածողութիւնը շարք մը այլ բաներու կողքին կը կրէր եւսժեկիքի ազդեցութիւնը: 1899ին Ուիլիամ Զ Ռայֆի անուանով ընկերարան մը հրատարակեց «Տը Ռէշլըս աֆ»՝ ընդ-րոպի վերնագիրով գիրք մը, որ եւսժեկիքի գաղափա-րաբանութիւնը կը խտացնէր: Ռայֆի եւրոպացիները կը բաժնէր երեք տարբեր ցեղերու. չէկ եւ կապուտաչ-եայ տեւտոնականներ (որոնք գաղապցումի ամենէն բարձր մակարդակին վրայ կը գտնուէին), դիրուկ եւ շագանակագոյն մազերով այլապէս ժողովուրդներ եւ թուրք ու նիհարակազմ միջերկրականցիները:

Թէ եւ եւրոպական «անբաքացիութեան» սակայն Ամերի-կայի ուժը իմեջ քաղաքացիութեան, սակայն Ամերի-կայի գաղթականական սրէնքները ձեւաւորուած էին այնպէս, որ նախապատուութիւն կը տրուէր ցեղային անելի ազնուական ծագում ունեցող գաղթականներուն: Թէ եւ բոլոր սպիտակամորթները գերադաս կ'ընային համարուելի սեւամորթներէն եւ դեպի կամ սրճագոյն ցեղերէն, սակայն նոյնիսկ սպիտակամորթ «ցեղերը» իրարու հաւասար չ'իրք չէին վայելեր:


Ամերիկան աստիճանաբար սորվեցան մէկ կողմ դնել իր ցեղային նախապաշարուածները: Իրօք, Ամերիկայի պատմութեան մեծ մասը կ'ընդգրկէ նախապէս արհա-մարհուած հաւաքականութիւններ ընդունելու հոյովոյ-թիւնը: Տարբեր ժամանակներու եւրոպական տարբեր եր-կիրներէ գաղթականներ, ինչպէս՝ լեհեր, իտալացիներ, ռուսմանցիներ, նաեւ հրեաներ, ծինական տեսակէտէն կասկածելի համարուած են, սակայն ի վերջոյ ընդուն-

Շարք՝ էջ 8



# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն

## ԱՇԽԱՐՀ



### ՈՂԻՄՊԱԿԱՆ ԽԱՂԵՐԷՆ ՆԿԱՐՆԵՐ




Մարիոն ճոնգ 100 մետր վազքի աղջկանց անգուզական հսկան:



Սօրիս Կրին. տղոց 100 մետրի «հրեշ»ը



Բրիտանացի Սթիվ Ռետկոյեյվ, յաջորդաբար 5 ողիմպիականներու ոսկի մետալներու տիրացող առաջին մարզիկը



Շուգարացի մարմնարզիկ Զոլվանի, որ տիրացաւ տղոց անհատական (գետնի վրայ) ոսկի մետալին:



Եթեանամարտի ոսկի մետալակիրը՝ Տենգ Լուիս. Յոյն ծանրաբարձ ԶաքիաՎիլիս:

«ԱՁԴԱԿ»-ի ԸՆԴՈՒՄՆԵՐԻ ԹԻԻԵՐԸ  
«ԱՁԴԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

### ՖՈՐՄԱԿԱՆ 1

#### ՇՈՒՄԱԽԸՐ ՇԱՀԵՑԱԻ ԻՆՏԻԱՆԱՅԻ ԿՐԱՆ ՓՐԻՆ

Երէկ գիշեր, Ֆորմալիս 1-ի աշխարհի ախոյեանութեան 15րդ հանգրուանը՝ Ինտիանայի (Մ. Ն.) կրան վրին (որ 9 տարի է վեր կը բացակայէր աշխարհի ախոյեանութեանէն), գերմանացի Միքայէլ Շումախըր (Ֆեռարի) շահեցաւ մրցումը: Երկրորդ հանգրուանը Շումախըրը խմբակիցը՝ պրակտիկ Ռուպերտ Պարիզելլո, իսկ երրորդ գերմանացի Հայնզ-Հարալտ Ֆրենցըր (Նորտրին): Շումախըրը այժմ կը գրաւէ ընդհանուր դասակարգման պարագլուխի դիրքը, 8 կէտով գերազանցելով Ֆինլանտացի Միքա Հալինէնը (Մաքլարըն), որ երէկ դուրս մնաց մրցումէն, երբ անոր ինքնաշարժը «միաց»: Բրիտանացի Տէյլիտ Բոլթըրտ (Մաքլարըն) հանդիսացաւ 5րդ:

#### ՃԱՏՐԱԿ ԱՇԽԱՐՀԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ ԸԱՅ ՎԱՐՊԵՏՆԵՐԸ ԼԱՒ ԴԻՐՔԻ ՎՐԱՅ

Երեւանի մէջ տեղի ունեցող աշխարհի ճատրակի երկրորդ փուլի 20 տարեկան ախոյեանութեան 9- հանգրուանի մրցումներուն, Կարէն Ասրեան հաւասարութիւն մը արձանագրելէ ետք Տրական Սոլաքի հետ, ունեցաւ 2,5 կէտ:

Հայաստանի ախոյեան Գարրիէլ Սարգսեան եւ Լեւոն Արոնեան ունին 2ական կէտ: Սարգսեան հաւասարութիւն մը արձանագրեց Կանկուլի Սուրիալի (Ինտոնեզիա) հետ, իսկ Արոնեան պարտութեան մատնեց Մարթին Սենֆիլին (Գերմանիա):

Դաւիթ Յարութիւնեան (Վրաստան) կէս կէտով կը գրաւէ վերջին դիրքը:

1,5ական կէտ ունին վարուստ Զակարեան եւ Տենիս սոն Զրոկիթ (Հոլանտա), որոնք իրարու հետ հաւասարութիւն մը արձանագրեցին: Աղջկանց մրցումներուն Լիլիթ Գալոյեան եւ Նելլի Աղինեան ունին 2ական կէտ: Գալոյեան յաղթեց Սոֆիկո ինուսիլիլիին (Վրաստան), իսկ Աղինեան հաւասարութիւն մը արձանագրեց Իվեթա Ռաձիբիլի (Լեհաստան) հետ:

1,5ական կէտ ունին Լիլիթ Սկարչեան եւ Նարինէ Գասպարեան, որոնք երկուքն ալ Գ. հանգրուանին յաղթանակներ արձանագրեցին. առաջինը՝ Տինարա ինգրիլեան (Քանադա) դէմ, իսկ երկրորդը՝ Սուլէյխա Փինայի (Բուլղարիա) դէմ:

### ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐ

#### ՄԱՐԻՈՆ ՃՈՆԶ ԵՒ ՄՕՐԻՍ ԿՐԻՆ՝ ՀԱԲԱԹԱՎԵՐՁԻ ԱՍՏՂԵՐԷՆ

Ողիմպիական խաղերու 8րդ եւ 9րդ օրուան աւարտին (Շաբաթ, Կիրակի), լուսարձակները ետ օրին կեդրոնացան 100 մետր աղջկանց եւ տղոց վազքի իրադարձութեան վրայ, ապա միջազգային բանաւոր թէ գրաւոր մասուլք մրցումներէն ետք եւս շարունակեց առաւելաբար այդ մասին գրել ու խօսիլ, թէ շաբաթավերջին արձանագրուեցան այլ հետաքրքրական ու մանաւանդ նորութիւններ մարզաշխարհին մէջ, ինչպէս օրինակ 28 տարեկան Նաոքո Թաքահաշիի ոսկի մետալը. ան հանդիսացաւ աշխարհի ճափոնցի առաջին աղջիկը, որ Ողիմպիական ոսկի մետալ կը շահի արեւմտեան մէջ (մարաթոն): Այլ հետաքրքրական երեւոյթ էր բրիտանացի Սթիվ Ռետկոյեյի ոսկի

մետալը: Ան Ողիմպիական իր 5րդ ոսկի մետալը շահեցաւ թիվարութեան մէջ (2000 մետր, 4 հոգիով): 1984ի, 1988ի, 1992ի, 1996ի եւ այժմ 2000ի Բրիտանիոյ խումբին մաս կազմող Ռիտկոյեյ միշտ ալ իր խմբակիցներուն հետ շահած է 2000 մետրի ոսկի մետալը: Անշուշտ ասիկա անմարմնաց մրցանիշ մըն է:

Վերադառնալով 100 մետր վազքին, ամերիկացիներ Մարիոն ճոնգ եւ Մօրիս Կրին աղջկանց եւ տղոց դասակարգին մէջ շարունակեցին իրենց մենատիրութիւնը, մանաւանդ ճոնգ, որ աւելի քան երեք մետր առաւելութեամբ գերազանցեց արծաթ մետալակիրը՝ յոյն Էքաթերին Թանուն:

#### ՀԱԲԱԹԱՎԵՐՁԻ ԿԱՐԵՒՈՐԱԳՈՅՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԵԱՆՑ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

##### ՀԱԲԱԹ ՕՐ

##### ԱԹԼԵԹԻԶՄ

- 100 ՄԵԹՐ ՎԱԶՔ (ԱՂՋԻԿՆԵՐ) Ոսկի - Մարիոն ճոնգ (Մ. Ն.) Արծաթ - Էքաթերին Թանուն (Յունաստան) Պրոնզ - Թանիա Լօրընս (Ճամայքա)
- 100 ՄԵԹՐ ՎԱԶՔ (ՏՂԱՔ) Ոսկի - Մօրիս Կրին (Մ. Ն.) Արծաթ - Ալթօ Պոլտոն (Թրինիտաո) Պրոնզ - Օպասեյթ Թոմսըն (Պարագայոս)

##### ՍՈՒՍԵՐԱՍԱՐՏ

- ԽՄԲԱՅԻՆ (ԱՂՋԻԿՆԵՐ) Ոսկի - Իտալիա Արծաթ - Լեհաստան Պրոնզ - Գերմանիա
- ԹՐԱՄՓԼԷՆ (ՏՂԱՔ) Ոսկի - Ալեքսանտր Մոսքալենքօ (Ռուսիա) Արծաթ - Ժի Ուալաս (Աւստրալիա) Պրոնզ - Մէթիու Թուրթօն (Քանադա)

##### ԹԱԿԱՐՈՒԹԻՒՆ

- ԽՄԲԱՅԻՆ (ՏՂԱՔ) Ոսկի - Բրիտանիա Արծաթ - Իտալիա Պրոնզ - Աւստրալիա

##### ԼՈՂԱՐՇԱՒ

- 50 ՄԵԹՐ ԱՁԱՏ (ԱՂՋԻԿՆԵՐ) Ոսկի - Ինկը տը Պրուլին (Հոլանտա) Արծաթ - Թերէյ Ալլամար (Շուէտ) Պրոնզ - Տարա Թորէս (Մ. Ն.)
- 1500 ՄԵԹՐ ԱՁԱՏ (ՏՂԱՔ) Ոսկի - Կրէնթ Հէքթ (Աւստրալիա) Արծաթ - Քրիսթոֆ Գրեքին (Աւստրալիա) Պրոնզ - Քրիս Թոմսըն (Մ. Ն.)

##### ●4x100 ՄԵԹՐ ԽՄԲԱՅԻՆ ԽԱՌՆ (ԱՂՋԻԿՆԵՐ)

- Ոսկի - Մ. Ն. Արծաթ - Աւստրալիա Պրոնզ - Ճափոն

##### ●4x100 ՄԵԹՐ ԽՄԲԱՅԻՆ ԽԱՌՆ (ՏՂԱՔ)

- Ոսկի - Մ. Ն. Արծաթ - Աւստրալիա Պրոնզ - Գերմանիա

##### ԿԻՐԱԿԻ

##### ԱԹԼԵԹԻԶՄ

- ՄԱՐԱԹՈՆ (ԱՂՋԻԿՆԵՐ) Ոսկի - Նաոքո Թաքահաշի (Ճափոն) Արծաթ - Լիտիա Սիմոն (Ռուսիա) Պրոնզ - Ճոյս Շեֆչուկ (Քանադա)
- ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ ՅԱՏԿԵԼ (ՏՂԱՔ) Ոսկի - Սերկէյ Բոլոկին (Ռուսիա) Արծաթ - Խալիթ Սոթոմայոր (Քուպա) Պրոնզ - Ապտէլուհան Ղալապա (Ալճերիա)
- ԵՕԹՆԱՄԱՐՏ (ԱՂՋԻԿՆԵՐ) Ոսկի - Տենիզ Լուիս (Բրիտանիա) Արծաթ - Ելենա Փրոքորովա (Ռուսիա) Պրոնզ - Նաթալիա Սազանովիչ (Պիլիպոսիա)

##### ՍՈՒՋՈՒՄ

- 10 ՄԵԹՐ (ԱՂՋԻԿՆԵՐ) Ոսկի - Լորա Ուրլիքինսըն (Մ. Ն.) Արծաթ - Լի Նա (Չինաստան) Պրոնզ - Անն Մոնմինի (Քանադա)

##### ՍՈՒՍԵՐԱՍԱՐՏ

- ԽՄԲԱՅԻՆ (ՏՂԱՔ) Ոսկի - Ռուսիա Արծաթ - Ֆրանսա Պրոնզ - Գերմանիա

##### ՄԱՐՄԱՍԱՐՁ

- ԳԵՏՆԻ ՎՐԱՅ (ՏՂԱՔ) Ոսկի - Իկոր Վիտրով (Լատվիա) Արծաթ - Ալեքսէյ Նեմով (Ռուսիա) Պրոնզ - Իորտան Իովչեւ (Պուլկարիա)

##### ●ԹՐԱՄՓԼԷՆ (ԱՂՋԻԿՆԵՐ)

- Ոսկի - Էլենա Ջամոլոտիչիբովա (Ռուսիա) Արծաթ - Անտրէա Ռատուբան (Ռուսիա) Պրոնզ - Էքաթերինա Լուպաչնիկ (Ռուսիա)

##### ●«ՁԻՈՒ» ՎՐԱՅ (ՏՂԱՔ)

- Ոսկի - Մարիուս Ուրլիքա (Ռուսիա) Արծաթ - Էրիք Փուլատ (Ֆրանսա) Պրոնզ - Ալեքսի Նեմով (Ռուսիա)

##### ●ՁՈՂԻ ՎՐԱՅ (ԱՂՋԻԿՆԵՐ)

- Ոսկի - Սվեթլանա Խորբինա (Ռուսիա) Արծաթ - Ժիլ Լինկ (Չինաստան) Պրոնզ - Եոն Եանկ (Չինաստան)

##### ●ՕՂԱԿՆԵՐՈՎ (ՏՂԱՔ)

- Ոսկի - Սզիլվիսթրա Քոստանի (Հունգարիա) Արծաթ - Տիմոթեյ Ռամփաքոս (Յունաստան) Պրոնզ - Իորտան Իովչեւ (Պուլկարիա)

##### ԵԱՆՐԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

- 94 ԲԿ. (ՏՂԱՔ) Ոսկի - Աքաբիտա Քաբիտա (Յունաստան) Արծաթ - Սզիլվիսթրա Քոստանի (Հունգարիա) Պրոնզ - Ալեքսէյ Փեթրով (Ռուսիա)

9րդ օրուան մրցումներէն ետք, մետալներու ընդհանուր դասակարգումը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.

	ՈՍԿԻ	ԱՐԾԱԹ	ՊՐՈՆԶ
Մ. Եստանգիէր	21	12	19
Չինաստան	18	14	12
Ֆրանսա	12	12	6
Ռուսիա	12	11	16
Իտալիա	11	6	11
Աւստրալիա	10	19	11
Ռուսիա	9	4	4
Հոլանտա	7	5	3
Գերմանիա	5	8	15
Բրիտանիա	5	7	3
Ճափոն	5	4	4
Հար. Քորէա	4	5	7
Լեհաստան	4	4	0
Պուլկարիա	4	2	2
Ռեքանիա	3	6	5
Շուէտ	3	2	1
Հունգարիա	3	1	1
Յունաստան	2	4	1

